AZG NEW 1.QXD 7/14/2009 11:10 PM Page 1

Ազգ
Azg

15 ՅՈՒԼԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 131 (4267)

ISSN: 1829-1651

# Իլհամ Ալիեւ. «Ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում հուսադրող դինամիկա է հաստատվել»

ԼՈՆԴՈՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այցով Լոնդոնում գտնվող Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում «ավելի հուսադրող դինամիկա է հաստատվել, կան առաջին արդյունքները, սակայն դրանք դեռեւս բավարար չեն գլխավոր նպատակին՝ վերջնական խաղաղության հասնելու համար»:

Այդ մասին, ինչպես այսօր հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Ալիեւն ասել է երկուշաբթի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում ունեցած ելույթի ժամանակ, որը հայտնի է նաեւ որպես Չեթամ-հաուս:

# Պայքյունը տեղի կունենա թույլ կետում

## Ըստ Արման Մելիքյանի

***Օբամա-Սարկոզի-Մեդվեդեւ հայտարարության՝ ղարաբաղյան հակամարտությունը կարգավորել հորդորող հիմնարար եւ խղազերծված մադրիդյան սկզբունքների թեմայով «Ազգի» զրուցակիցն է ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը.***

- Ընդհանուր առմամբ դա աշխարհի գերտերությունների հորդորն է Հայաստանին եւ Ադրբեջանին՝ ԼՂՀ-ն այստեղ արտացոլված չէ, ԼՂՀ-ն դուրս էր մղված բանակցային գործընթացից: Իմ մոտեցումն այն է, որ առհասարակ այս ձեւաչափով բանակցությունները վարելը խեղաթյուրում է ստեղծված իրողությունը, խեղաթյուրված է նաեւ հակամարտության պատմությունը, ուստի նաեւ՝ արդարության պատկերացումը: Այս բանակցային տրամաբանությունը ցույց է տալիս, որ Հայաստանն ագրեսոր պետություն է, Հայաստանը պետք է տարածքները հանձնի Ադրբեջանին, թույլ տա, որ ադրբեջանցի փախստականները վերադառնան, զրկվի նաեւ Ղարաբաղը Հայաստանի հետ հիմնարար ցամաքային կապից. Էս տեսակետից այս հայտարարությունը բավական վտանգներ է պարունակում: Բայց նորություն չէր այս ամենը՝ տարիներ շարունակ հենց էս հարցերով էին բանակցում Հայաստանի բոլոր իշխանությունները, եւ մեծ



հաշվով մեծ տարբերություն չեմ տեսնում ներկա իշխանությունների, նրանց նախորդների, Լեւոն Տեր-Պետրոսյանի շրջանի վարած արտաքին քաղաքականության միջեւ: Ի վերջո՝ այսօրվա հանգրվանը նախապատրաստված էր մեր անկախությունից ի վեր, անցած բոլոր տարիների ընթացքում:

**- Այսինքն՝ ցանկության խնդիր չէ այստեղ, այլ՝ գործիքների, ունակությունների եւ իմաստությունների՞...**

- Նաեւ՝ սկզբունքայնության: Առաջին հերթին սկզբունքայնության. այս փաթեթի շուրջը բանակցելը մեծ հաշվով գործարք է, որովհետեւ հայկական կողմերը լուրջ նահանջներ կատարեցին իրենց սկզբնական մոտեցումներից եւ պահանջներից: Եվ այս տեսանկյունից առաջին հերթին սկզբունքայնության պակասն էր, որ թույլ տվեց Հայաստանի բոլոր ժամանակների իշխանություններին՝ մտնել գործարքի մեջ եւ բերել-գործը հասցնել այն վիճակին, երբ հայկական կողմերն իրավացի չեն ոչ մի հարցում, եւ պարզապես պարտավորված են հանձնելու այն ձեռքբերումները, որ ունեցել են անցյալ տարիների ընթացքում: Խնդրի լրջանալն սկսվել է վաղուց, ուղղակի հիմա դրա նոր ապացույցն ենք տեսել:

Տես էջ 2

ԷԺԱՆԱԳԻՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

# Իլհամ Ալիեւը ստում է

**«Հայ մտավորականության ներկայացուցիչները, լինելով Շուշիում, տեսել են մզկիթը՝ փլատակների տակ: Իսկ հետո, երբ եկել են Բաքու, տեսել են հայկական եկեղեցին՝ վերականգնված՝ որպես պատմական հուշարձան», Լոնդոնի Chatam House-ում ելույթ ունենալով այսպիսի հայտարարություն է արել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Փաստը, որ Ադրբեջանի նախագահը զգացմունքային հայտարարություններ սիրում է, վաղուց հայտնի երեւույթ է, սակայն ակնհայտ ստել, այն էլ օտար երկրում, անցնում է բոլոր սահմանները, անգամ ադրբեջանցիների համար: Անդրադառնալով Ալիեւի հայտարարությանը՝ Panorama.am-ը հայ մտավորականության ներկայացուցիչներից պարզել է, թե որքանով է ադրբեջանցի պաշտոնյաների խոսքը համապատասխանում իրականությանը. պարզվել է, որ Ալիեւը ստում է: Փարաջանովի տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը, որ խմբի անդամներից էր, նկատել է, որ հայտարարություն անողն առաջին հերթին պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ Շուշին պատերազմ է տեսել, ի տարբերություն Բաքվի:**

**Թե՛ Զավեն Սարգսյանը, թե՛ խմբի մեկ այլ անդամ, «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը փաստեցին, որ Բաքվում հայկական եկեղեցին նորոգված չէր, իսկ խաչը վրայից բացակայում էր:**

**«Հայկական եկեղեցին նորոգված չէր: Գլխավոր մուտքի փոխարեն պատ է շարված, հայկական արձանագրությունները ջնջված են, խաչը հանված է, իսկ ներսում ոչ թե գրադարան է, այլ գրքերի պահեստի նման մի բան: Կային, օրինակ, Լենինի հատորները», նկարագրեց Զավեն Սարգսյանը:**

**Վերջինս շրջել է եկեղեցու շուրջը եւ չի հայտնաբերել հայկական տառեր, որոնք սովորաբար լինում են հայկական եկեղեցիների վրա: Բացակայում էին նաեւ բակում երբեւէ եղած խաչքարերի կտորներ:**

**Զավեն Սարգսյանը հավաստիացնում է, որ 1987-ին եղել է եկեղեցում ու տեսել է խաչքարեր, որոնք այսօր անհայտացել են:**

**Անդրադառնալով Շուշիի մզկիթին՝ խմբի անդամները նկատել են, որ մզկիթը գտնվում է բարվոք վիճակում, ավելին՝ այնտեղ ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Փարաջանովի տուն-թանգարանի տնօրենն էլ ավելացրեց, որ խորհրդային տարիներին շինությունը ոչ թե մզկիթ էր, այլ գավառագիտության թանգարան:**

**«Դա դեմագոգիա է: Իսկ Ջուղայի խաչքարերի հա՞րցը: Ես նրանց հարցրեցի՝ ինչպե՞ս 3.000 խաչքար ջարդեցիք-փշրեցիք: Դրան թող պատասխան տան: Թող Ջուղայի եւ Ագուլիսի հուշարձանների համար պատասխան տան, որ այսօր գոյություն չունեն», եզրափակեց արվեստագետը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ամենայն հայոց կաթողիկոսը մեկնել է Մոսկվա

**ԷՋՄԻԱԾԻՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հուլիսի 14-ին մեկօրյա պաշտոնական այցով մեկնել է Մոսկվա, որտեղ հանդիպում կունենա Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա պատրիարքի հետ, հայտնեցին Մայր աթոռ Սբ Էջմիածնից:**

# Մեթյու Բրայզա. «Նաբուկո» նախագիծը կարեւոր է Թուրքիայի եւ Վրաստանի համար»

**ԹԲԻԼԻՍԻ, 14 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այդ մասին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Մեթյու Բրայզան լրագրողներին հայտարարել է Անկարայում, որտեղ երկուշաբթի օրը միջկառավարական համաձայնագիր է ստորագրվել «Նաբուկո» նախագծի վերաբերյալ: «Նախագիծը նշանակալի է Վրաստանի եւ Թուրքիայի համար: Այն ուժեղացնում է երկու երկրների ռազմավարական կարեւորությունը: Եվրոպային ադրբեջանական գազի մատակարարումը նշանակում է, որ Եվրոպան էներգիայի այլընտրական աղբյուր կստանա»,- ասել է Բրայզան, եւ հավելել, որ նախագծի իրագումից հետո Վրաստանն եւ Թուրքիան «գազի երաշխավորված պաշարներ կունենան»:**

# Նախագահ Սերժ Սարգսյանը բարգավաճում մաղթեց Ֆրանսիայի ժողովրդին

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի Ազգային տոնի առթիվ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր այցելել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, հանրապետության նախագահը շնորհավորելով դեսպանության աշխատակազմին՝ Ֆրանսիային մաղթել է հետագա զարգացում, իսկ նրա ժողովրդին՝ բարգավաճում:

Երկրի ղեկավարը երախտագիտություն է հայտնել Ֆրանսիային՝ մեր ժողովրդի համար օրհասական պահին օգնության ձեռք մեկնելու, նրա մի զգալի հատվածին իր գիրկն ընդունելու, զարգանալու հնարավորություն ստեղծելու համար եւ նշել, որ նրանք այսօր լինելով լիիրավ ֆրանսիացի, հավատարիմ են նաեւ հայկական ինքնությանը:

Սերժ Սարգսյանը կարեւորել է նաեւ 2001 թվականին Ֆրանսիայի կողմից օրենքի ուժով Հայոց ցեղասպանության ճանաչումը:

# Եվրոմիության «եռյակը» ժամանում է

ՄՈՍԿՎԱ, 14 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոմիությունը նախագահող Շվեդիայի արտգործնախարարի գլխավորությամբ Եվրոմիության «եռյակի» պատվիրակությունը հուլիսի 16-20-ը այցով կգտնվի Հարավային Կովկասում: Այդ մասին ասված է Եվրոմիության պաշտոնական կայքում զետեղված հաղորդագրության մեջ:

Այցի ընթացքում հանդիպումներ են սպասվում հարավկովկասյան բոլոր երեք երկրների նախագահների եւ արտգործնախարարների հետ:

Բիլդտի հետ միասին տարածաշրջան կժամանեն Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչներ Կարել Կովանդան, Ջոն Կյաերը, Փիթեր Սեմնեբին եւ Պաոլո Բարոնո Սիմոնը: Կենտրոնական Ասիայում հատուկ հանձնարարությունների իսպանացի դեսպանը ներկայացնելու է Եվրոմիությունը նախագահող հաջորդ երկիրը:

# Երեւանում կկառուցվի «Հիլտոն» հյուրանոց

## 25-30 մլն դոլար կազմող կառույցի շինարարությունը կսկսվի եկող տարի

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երկու տարի տեւած բանակցություններով, Երեւանում «Հիլտոն գարդեն ինն» հյուրանոց եւ ցուցահանդեսային համալիր կառուցելու իրավունք է ձեռք բերել «Բեդյան ինտերնեյշնլ» ընկերությունը: Այդ մասին մանրամասներ հաղորդելու նպատակով երեկ, Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատում (ՀԱԱՊ), լրագրողների հետ հանդիպեցին «Բեդյան ինտերնեյշնլի» նախագահ Գարի Բեդյանը, ՀԱԱՊ նախագահ Մարտին Սարգսյանը եւ փոխնախագահ Արամ Վարդանյանը:

**Արամ Վարդանյանը** տեղեկացրեց, որ Գարի Բեդյանը Կալիֆոռնիայում հայտնի գործարար է, ավելի քան 20 տարի զբաղվում է հյուրանոցային բիզնեսով, ղեկավարում է 6 հյուրանոցներ ԱՄՆ-ում, որտեղ նաեւ բաժնեմաս ունի: ՀԱԱՊ հետ համատեղ ամերիկահայ գործարարը մշակել է Երեւանում նոր հյուրանոց կառուցելու




նախագիծը: Արամ Վարդանյանը նշեց, որ առեւտրաարդյունաբերական պալատը հատկապես շահագրգիռ է ցուցահանդեսային համալիրի կառուցման հարցում, քանի որ Հայաստանում անցկացվող ցուցահանդեսները տեղի են ունենում տարբեր վայրերում՝ ընդհուպ կառավարության շենքում: Հյուրանոցային եւ ցուցահանդեսային համալիրներում ՀԱԱՊ-ն, ամենայն հավանականությամբ, կունենա իր բաժնեմասը: ՀԱԱՊ փոխնախագահը առաջիկայում հավանական համարեց նաեւ Գյումրիում նման հյուրանոցի կառուցումը, որին նպաստող գործոններ են դեպի Վրաստան նոր ճանապարհի կառուցումը եւ Թուրքիայի սահմանի հնարավոր բացումը:

**Գարի Բեդյանը** նշեց, որ գոյություն ունեն 5,4 եւ 3 աստղանի «Հիլտոն» հյուրանոցներ, բայց որոշվեց Երեւանում կառուցել 3 աստղանի, որն ավելի մատչելի կլինի գործարարների եւ զբոսաշրջիկների համար: Նոր հյուրանոցը կսկսի կառուցվել եկող տարվանից Երեւանից օդանավակայան ճանապարհի՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատնից մոտ 1 կմ հեռավորության վրա: Այդ նպատակով արդեն հատկացվել է 2 հա տարածք: Հյուրանոցը բաղկացած կլինի 202 հյուրանոցային եւ 40 բնակարանային համարներից, կունենա մեծ եւ փոքր կոնֆերանս-դահլիճներ, լողավազաններ, մարզասրահ, 3500 մ ցուցահանդեսային տարածք, 250 քմ ավտոկայանատեղի եւ այլն: Կունենա 24-ժամյա անվճար տրանսպորտային ծառայություն դեպի Երեւանի կենտրոն եւ օդանավակայան:

Տես էջ 3

# Ընթացիկ

## Նախագահների հերթական հանդիպումը՝ նոր զարգացումներից հետո

### *Մադրիդյան սկզբունքների մեկնաբանություններ*

Անգամ մադրիդյան սկզբունքների քողազերծումից հետո էլ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների առաջիկա հանդիպումից քաղաքագետներ **Սուրեն Զոլյանն** ու **Երվանդ Բոզոյանը** հստակ ակնկալիքներ չունեն: Հանդիպումը, նրանց կարծիքով, կարելի է հերթական համարել, միակ տարբերությունն աշխարհում սրընթաց զարգացող դեպքերն են, որոնց լույսի ներքո էլ ընթանալու են բանակցությունները: «Մեծ ութնյակի» հանդիպումը, Նաբուկոյի համաձայնագրի ստորագրումը, ղարաբաղյան կարգավորման շուրջը հնչող հայտարարությունները եւ սկզբունքների բացահայտումը քաղաքագետներին ստիպելու են առավել ուշադրությամբ հետեւել նախագահների հանդիպմանը:




Քաղաքագետ Երվանդ Բոզոյանը, մեկնաբանելով մադրիդյան սկզբունքները, «Հայելի» ակումբում նշեց, որ առանց հստակեցնելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը՝ տարածքների վերադարձի հարցի քննարկումը կարող է վտանգավոր տարրեր պարունակել: «Հիմնական խնդիրը՝ ԼՂՀ կարգավիճակի հարցը այս փաստաթղթում լուծված չէ», ասաց Երվանդ Բոզոյանը:

Սուրեն Զոլյանը նկատեց, որ սկզբունքները նոր չեն, իսկ մեկնաբանությունները կարող են հակասական լինել «կախված նրանից, թե ինչ հերթականությամբ կկիրառվեն սկզբունքները: Իսկ որն է առաջին սկզբունքը, որը՝ երկրորդ, փաստաթղթում նշված չէ»: Նրան մտահոգել է, որ մադրիդյան սկզբունքների շուրջը բանակցություններում ղարաբաղյան կողմը ներկայացված չէ:

Երկու քաղաքագետներն էլ վստահ են, որ արցախյան խնդրի լուծումը դեռեւս հեռավոր ապագայի հարց է: Ե՛վ Հայաստանը, ե՛ւ Ադրբեջանը պարզապես պատրաստ չեն այդ քայլին: «Այսօր լուծումը կարող է պարտադրված լինել մեծ տերությունների կողմից», ասաց Սուրեն Զոլյանը: Նա կարծում է, որ ներկա պահին Ադրբեջանը հզորանում է ի հաշիվ նավթային պաշարների, խոշոր տերությունները սիրաշահում են Ադրբեջանին: «Սա ժամանակավոր շրջան է հօգուտ Ադրբեջանի: Կարծում եմ, տերությունները պետք է կայունություն ապահովեն տարածաշրջանում, որը բնավ էլ չի նշանակում բավարարել Ադրբեջանի ախորժակը», ասաց Սուրեն Զոլյանը:

Երվանդ Բոզոյանը, սակայն, վստահ է, որ Ադրբեջանի կշիռն այնքան էլ բարձր չէ, որպեսզի մեծ տերությունները սիրաշահեն այդ երկրին: «Ադրբեջանում տիրում է մեկ մարդու քաղաքականությունը: Պարզապես կարգավորման հարցում օգտագործվում է մի մեխանիզմ, ըստ որի ճնշումն առավելապես գործադրվում է այն հատվածում, ուր ավելի արդյունավետ է», ասաց Երվանդ Բոզոյանը: Նա համոզված է, որ ստատուս քվոյի պահպանումն ու ժամանակն աշխատում են Հայաստանի օգտին:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

## Պայթյունը տեղի կունենա թույլ կետում

*1-ին էջից*

**- Փորձենք վերլուծել «հիմնարար» սկզբունքները եւ սկսենք տարածքների վերադարձից;**

- Դա միշտ կար, որովհետեւ հայկական կողմերն ի սկզբանե նահանջ էին թույլ տվել շատ սկզբունքային մի շարք խնդիրներում, օրինակ՝ հայ փախստականների խնդիրն ի սկզբանե չդրվեց բանակցային սեղանին..

**- Կարող էին՝ չդրեցի՞ն:**

- Այո, կարող էին, չդրեցին: Դժբախտաբար ստիպված եմ այսօր արձանագրել, որ Հայաստանի իշխանություններից եւ ոչ մեկը ադրբեջանահայ փախստականների խնդրի քաղաքական կողմը լուրջ չընկալեց եւ չփորձեց էլ դրանով զբաղվել: Այսօր թե՛ ընդդիմությունից, թե՛ իշխանությունից տարատեսակ մարդիկ ասում են, որ մեզ համար ամենակարեւորը Ղարաբաղի կարգավիճակի ճանաչումն է՝ առանց հասկանալու, որ ղարաբաղյան կարգավիճակը հակամարտության հիմնական, բայց խնդիրներից միայն մեկն է: Այս փաստաթղթից (հայտարարությունից- Մ.Խ.) երեւում է մի բան, որ բանակցությունների ընթացքում հայկական կողմն ընդունել է, թե Լեռնային Ղարաբաղի տարածք կարելի է ընկալել միայն նախկին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը: Այսինքն՝ այստեղ շատ լուրջ տարածքային խնդիր կա, որը վերաբերում է բացառապես բանակցություն վարող հայկական կողմին:

**- Ի՞նչ է նշանակում Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ (սա հայտարարության մեջ), մենք հասկանում ենք այդ միջանկյալը հիմա, նրանք՝ 5 տարի հետո՞...**

- Ոմանք էլ այդ կարգավիճակը կհամարեն հավերժ: Ոչ միայն այս, այլ բոլոր կետերն էլ վտանգներ են պարունակում, բայց ամենամեծ վտանգը մեր մեջ է: Դա կարող է լինել որոշակի մասնակի ինքնավարության կարգավիճակ, այսինքն՝ այնտեղ կարող են լինել տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք մեծ հաշվով ո՛չ պաշտպանության, ո՛չ արտաքին քաղաքականության հարցերում իրավազոր չեն լինի, եւ այս տեսանկյունից՝ կլինեն մոտավորապես գյուղական համայնքի մակարդակի ինչ-որ բաներ:

**- Իսկ, օրինակ, մադրիդյան սկզբունքներում այդ կարգավիճակն անվանված է անցումային՝ ինքնակառավարման եւ անվտանգության ապահովմամբ:**

- Պարզապես կարող են անգամ կառավարիչ նշանակել, ամեն բան սրա տակ կարելի է ենթադրել, անգամ դա կարող է լինել, ասենք, հոլանդացի, կապ չունի, եթե դա տեղում ընտրված օրինական իշխանություն չէ՝ պարզապես արտաքին կառավարման մի ձեւ կարող է լինել: Ես, որքան գիտեմ՝ հայկական բանակցողները երբեւէ որեւէ առաջարկ չեն արել այս առումով: Ընդհանրապես՝ բանակցություններ չեն արվել: Մենք նորահարսի պես նստած, սպասել ենք, թե համանախագահները երբ ինչ կառաջարկեն, որպեսզի համաձայնենք կամ դժկամություն հայտնենք:

**- Օսկանյանը կարծես ինչ-որ առաջարկի մասին ասում էր:**

- Ներողություն, իրավացի եք, մի առաջարկ արվել է՝ ԼՂՀ-ն բանակցային գործընթացից դուրս է մղվել, սա հայկական կողմի միակ առաջարկն է, որը տեսանելի է: Բոլորն ասում են, թե մադրիդյան սկզբունքները վատն են, բայց որեւէ կողմից՝ կուսակցություններ, պաշտոնյաներ, առաջարկ կա՞: Իսկ մենք ծրագիր ենք առաջարկում, այդ ծրագրի վրա շատ կազմակերպություններ եւ անհատներ են աշխատել, դա քաղաքական քայլերի հաջորդականություն է՝ Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանությունների եւ ժողովրդի համագործակցությամբ, որը թույլ կտա ե՛ւ տարածքները պահպանել, ե՛ւ տարածքները պահպանելու փաստը հավուր պատշաճի ներկայացնել միջազգային հանրությանն այնպես, որ դա ընդունելի լինի արտաքին աշխարհի համար:

Միջանցքի մասով. եթե մնաց միջանցքը, անգամ եթե այդ միջանցքի լայնությունը 5 կամ 10 կմ լինի, հավաստացնում եմ՝ 6 ամսից Ղարաբաղում հայ բնակչություն չի մնա:

**- Կարգավիճակի հետագա որոշումը՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով՝ սա ինչ-որ շոշափելի բան պարունակո՞ւմ է:**

- Հանրաքվեի, կամ պլեբիսցիտի մասին է խոսքը (առաջինն ավելի պարտադրող է եւ պետք է ընդունվի իշխանությունների կողմից, իսկ պլեբիսցիտը ի գիտություն է ընդունվելու): Սա առայժմ մեզ ոչինչ չի տալու: Ժողովուրդը պետք է արտահայտվի տարբեր կարգավիճակների վերաբերյալ:

**- Փախստականների՝ նախկին բնակության վայրերը վերադառնալու իրավունքի կետը կամ խորհուրդը ի՞նչ է:**

- Սա բոլոր կետերի մեջ թերեւս մեզ համար առավել կարեւոր կետն է, որտեղ հակամարտության լուծման բանալին մարդիկ են, այդ թվում՝ փախստականները, ներքին տեղահանվածները: Ես տարիներ պնդում եմ, որ հայկական կողմերը պարտավոր են բարձրացնել հայ փախստականների խնդիրը, պահանջել փոխհատուցում, եւ քանի որ Ադրբեջանն այսպես թե այնպես չի տալու այդ փոխհատուցումը, հայ փախստականները չեն վերադառնալու Բաքու, պետք է, ուրեմն, անհատույց եւ անվճար նրանց տրամադրվեն այսօրվա ազատագրված տարածքները: Ես պնդում եմ, որ որեւէ միջազգային կառույց, որեւէ գերտերություն այս մոտեցմանը որեւէ հակադարձելու բան չի ունենա: Այդ գործընթացը մենք հանգիստ կարող ենք ձեռնարկել:

**- Խաղաղապահ ուժերի անվտանգության երաշխիք լինելն էս գլխից բոլորի համար կասկածելի է:**

- Այդ զորախմբերը պետք է կանգնեն, ըստ երեւույթին, Ղարաբաղի սահմանագլխին, ինչպե՞ս այդ սահմանները պիտի ճշտվեն՝ դա էլ առանձին հարց է, եւ պաշտպանեն ադրբեջանցի ու հայ բնակչությանը:

**- Դա ե՞րբ է լինելու:**

- Դա երբեք չի լինելու:

**- Ի՞նչ պետք է անեն այս պահին պետությունը, քաղաքական միավորները... Արդյոք Նալբանդյանի հրաժարականի պահանջը պարզապես որոշակի ուղղորդում չէ՞ հնարավոր դժգոհությունների համար...**

- Տարիներ շարունակ մարդիկ նստել-լռել եւ համակերպվել են տեղի ունեցողին: Այսօր, երբ հնչեցվեց այն, ինչ տարիներ շարունակ հայտնի էր, չգիտես ինչու որոշեցին պայթեցնել վիճակը: Այսպիսի մոտեցումներն էլ լուրջ չեն, քանի որ բացի մերժողականությունից՝ ոչինչ չի առաջարկվել, եւ այսպիսի մոտեցումներն էլ լուրջ չեն կարող ընդունվել: Պետության խնդիրն է հաշվարկել արտաքին մարտահրավերները, սեփական ռեսուրսները, որոնց հաշվին է վարվում քաղաքականությունը. որ քայլերը հաշվեն, եւ երկու պետությունների համատեղ քայլերի ընթացքում բեկում մտցվի իրավիճակում հօգուտ մեզ:

**- Հայտարարությունը որոշ քաղաքական ուժեր ընկալում են որպես խնդրի լուծման արագացման ստույգ ցուցիչ:**

- Ընդհանուր առմամբ տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրությունն աճել է եւ աճելու է, բայց խնդիրներ են լուծվում ոչ միայն մեր տարածաշրջանում, այլեւ Ռուսաստան-Արեւելյան Եվրոպա, Ռուսաստան-Արեւմտյան Եվրոպա շփման գծում: Պայթյունը տեղի կունենա թույլ կետում: Դա կլինի Հարավային Կովկասը, Ուկրաինան, թե՞ Մերձբալթիկան՝ ժամանակը ցույց կտա, բայց առավել վտանգված կլինեն այն երկրները, որտեղ չի լինի իշխող վերնախավի, հասարակության միաբանություն՝ ազգային հիմնական խնդիրներում:

**- Քաղաքական ենթատեքստ կարելի՞ է տեսնել այս բոլորի մեջ՝ նաեւ Հայաստանում իշխանություն փոխելու...**

- Օրվա իշխանությունը միանգամայն ընդունելի է արտաքին հիմնական խաղացողների համար, քանի որ բավական փափուկ է:

**- Իսկ որ կոնգրեսականներն ափալ-թափալ փեշերը թափ են տալիս ու գնում այդ թեմայով հանդիպումների՞...**

- Կոնգրեսը նույն վիճակում է, իրավիճակից դուրս գալու հստակ ծրագիր չի ունեցել եւ չունի: Եվ մեծ հաշվով ժամանակին նրանք նույն ձեւով արտահայտվում էին մադրիդյան սկզբունքների մասին: Վերջին հաշվով Ադրբեջանին տարածքները հանձնելու մասին իրենք էլ ըստ էության նույն մոտեցումն ունեին՝ տարիներ համարվում էր, որ տարածքները պետք է հանձնվեն: Այս տեսանկյունից ես տարբերություն չեմ դնում ՀԱԿ-ի եւ օրվա իշխանության միջեւ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴԵՊՔ

## Անչափահասին մեղադրանք առաջադրվեց

ՀՀ ոստիկանությունը հուլիսի 13-ին մեղադրանք է առաջադրել «Հայկական ժամանակ» թերթի պատասխանատու Հայկ Գեւորգյանի որդու՝ 14-ամյա Հերբերտ Գեւորգյանի նկատմամբ: Վերջինս մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 25 հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից եւ զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով):

Հիշեցնենք, որ Հերբերտ Գեւորգյանը, Տիգրան Առաքելյանն ու Սահակ Մուրադյանը ձերբակալվել էին հուլիսի 1-ին՝ Աբովյան փողոցում ՀԱԿ-ի հանրահավաքի մասին թռուցիկներ բաժանելու ժամանակ եւ հենց այդ ընթացքում էլ տեղի էր ունեցել ընդհարում քաղաքացիական հագուստով ոստիկանության աշխատողների հետ: Ոստիկանությունից վստահեցնում են, որ երիտասարդներն են եղել ծեծի նախաձեռնողները:

**«Ազգը»** փորձեց Հայկ Գեւորգյանից ճշտել, թե իր որդին կասկածյալ էր ու այսօր արդեն նրան մեղադրանք է առաջադրվել եւ որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը. «Մեղադրանք առաջադրել են ու դա արդեն փաստ է: Իսկ այդ մեղադրանքը, իհարկե, չի համապատասխանում իրականությանը, ծայրից ծայր սուտ է: Վկայություն տվող ոստիկանները հայտնի են որպես սուտ ցուցմունքներ տվողներ, ինչպիսին է Էրիկ անունով ոստիկանը: Քանի որ որդիս անչափահաս է, ըստ գործող օրենքի, հանձնված է իմ հսկողությանը եւ ընթանում է հարցաքննություն: Մինչեւ երեկ նա համարվում էր գործով կասկածյալ, իսկ այսօր արդեն մեղադրյալ է: Նա որոշել է ցուցմունք չտալ, պատճառաբանելով, որ անմեղ է»:

Տեղեկացնենք, որ 27-ամյա Տիգրան Առաքելյանի նկատմամբ դատարանը իբրեւ խափանման միջոց երկամյա կալանավորման որոշում է կայացրել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Շնորհավորանք

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության ատենապետ, մեր թերթի լրատվության պատասխանատու եւ վերլուծաբան **Արմեն Մանվելյանի** ընտանիքում երեկ ծնվեց 3-րդ երեխան՝ **Արմինեն:**

**«Ազգի»** խմբագրակազմը այս առիթով ջերմորեն շնորհավորում է Արմեն եւ Նունե Մանվելյաններին եւ նորածնին մաղթում առողջություն ու գեղեցիկ ապագա:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/14/2009 10:27 PM Page 1



# Գերմանական MVV կոնսորցիումը ստանձնեց «Լոռի ջրմուղկոյուղու», «Շիրակ ջրմուղկոյուղու» եւ «Նոր Ակունքի» կառավարումը

Գերմանական MVV կոնսորցիումի հետ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն երեկ կնքեց կառավարման պայմանագիր՝ երեք տարի ժամկետով՝ եւս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Ինչպես հայտնի է, «Լոռի ջրմուղկոյուղի», «Շիրակ ջրմուղկոյուղի» եւ «Նոր Ակունք» ընկերություններում իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովման, կառավարման արդյունավետության բարձրացման, սպառողներին որակյալ ծառայությունների մատուցման որակը բարելավելու նպատակով հայտարարվել էր միջազգային օպերատորի ընտրության մրցույթ: Հաղթած օպերատորին գերմանական KfW բանկը տրամադրելու է 3 մլն եվրո դրամաշնորհ՝ ընկերությունների կառավարման համար: Իրենց առաջարկները էին ներկայացրել միջազգային շուկայում հայտնի եւ ջրային ոլորտում մասնագիտացված 5 կազմակերպություններ՝ գերմանական Remondis Aqua Gmbh & Co KG, գերմանական Berlinwasser International, ֆրանսիական Veolia Eau, գերմանական MVV dekon GmbH եւ ֆրանսիական SAUR: Մրցույթի հաղթող ճանաչվեց գերմանական MVV dekon GmbH, MVV Energe AG եւ հայկական AEG service ՍՊԸ կոնսորցիումը:



Պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ ջրային տնտեսության պետական կոմիտեի փոխնախագահ Գագիկ Խաչատրյանը ասաց, որ ջրամատակարարման եւ ջրահեռացման ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումները ուղղված են ընկերությունների ֆինանսական եւ տեխնիկական գործունեության, բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակի բարելավմանը: Մի շարք ներդրումային ծրագրեր են իրականացվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային միջոցներով եւ կառավարության համաֆինանսավորմամբ: Մասնավորապես, կոմիտեի փոխնախագահը նշեց, որ հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում, գերմանական վերականգնման բանկի (KfW) վարկային միջոցներով իրականացվել է Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիրը, իսկ Լոռու եւ Շիրակի մարզերում այդ աշխատանքները դեռ շարունակվում են: «Լոռի ջրմուղկոյուղին» սպասարկում է 1 քաղաք եւ 16 գյուղական համայնք, «Շիրակ ջրմուղկոյուղին»՝ 2 քաղաք եւ 35 գյուղական համայնք, «Նոր Ակունքը»՝ 2 քաղաք եւ 9 գյուղական համայնք:

Որպես կառավարման պայմանագրի կողմ հաղթող կազմակերպությունը պայմանագրի գործողության ընթացքում կմատուցի կառավարման, շահագործման եւ պահպանման ծառայություններ, կստանձնի լիարժեք պարտավորություններ եւ պատասխանատվություն՝ այս երեք ընկերություններն արդյունավետ կառավարելու համար: Մասնավորապես, ընկերության առջեւ պայմանագրով դրված են ջրամատակարարման տեւողության ավելացման, ջրակորուստների նվազման, վարձավճարների հավաքման պարտավորություններ:

MVV dekon GmbH-ը միջազգային ընկերություն է, որը ներկայումս իրականացնում է Գերմանիայի Մանհեյմ, Օֆենբախ, Զոլինգեն, Քիլ եւ այլ քաղաքների ջրամատակարարումը, ինչպես նաեւ ծրագրեր է իրականացրել աշխարհի ավելի քան 80 երկրներում:

Պայմանագրի ստորագրմանը ելույթ ունեցավ եւ գերմանական ընկերության՝ պայմանագրով նախատեսված առաջիկա գործունեությանն անդրադարձավ նաեւ MVV-ի ներկայացուցիչ Սվեն Սոտերը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Արի տուն» ծրագրի 137 «ծիծեռնակները» ժամանել են Հայաստան

Երեկ ՀՀ սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ **Ժենյա Ազիզյանը**, որը նաեւ «Արի տուն» ծրագրի ղեկավարն է, հանդիպեց լրագրողների հետ եւ ներկայացրեց ծրագրի վերջնական տարբերակը: «Արի տուն» ծրագրին **«Ազգը»** մի քանի անգամ անդրադարձել է: Վարչապետի որոշմամբ ստեղծված համակարգող խորհրդում ընդգրկվել են ՀՀ պաշտպանության, առողջապահության, տարածքային կառավարման, արտաքին գործերի, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, մշակույթի, կրթության եւ գիտության, սպորտի եւ երիտասարդության նախարարությունները, ոստիկանությունը եւ ավիացիայի գլխավոր վարչությունը, ինչպես նաեւ Արարատի, Արմավիրի, Կոտայքի եւ Արագածոտնի մարզպետարանները: Իսկ սփյուռքի նախարարությունում ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբում ներառված են նաեւ Երեւան քաղաքի վարչական շրջանների ներկայացուցիչները:

«Արի տուն» ծրագրի նպատակն է, նշեց տկն Ազիզյանը, Հայաստան-հայրենիքը ճանաչելի դարձնել աշխարհասփյուռ հայ երիտասարդներին, նպաստել սփյուռքահայ երիտասարդության մեջ հայրենիքի զգացողության ձեւավորմանը, արմատավորել ազգային արժեքային համակարգ, ծանոթացնել հայ ընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին, աջակցել Հայաստան-սփյուռք բարոյահոգեբանական, կրթամշակութային մերձեցմանը»:

Ծրագրի իրականացմանը պետբյուջեից հատկացված 25 միլիոն դրամը մրցույթի ընթացքում հաղթող ճանաչված «Բուսվոյաժ», «Յան-սերվիս», «Մարմ-Արմ» կազմակերպությունները ներկայացրել էին մոտ 22 միլիոնի ծախսային բյուջե: Հուլիսի 15-30-ը ծրագրի առաջին փուլին մասնակցող 137 սփյուռքահայերը ժամանել են Հայաստան, հուլիսի 16-ին սփյուռքի նախարարությունում տեղի կունենա նրանց եւ հյուրընկալող ընտանիքների հետ հանդիպում-ընդունելությունը: Իսկ մինչ այդ, ինչպես տեղեկացրեց «Արի տուն» ծրագրի ղեկավար Ժենյա Ազիզյանը. «Ծրագրի մասնակցի ծախսերը բաժանվել են երեք մասի՝ մասնակիցը ժամանում է իր սեփական կամ համայնքային կառույցի աջակցությամբ, ՀՀ-ի սահմանը հատելուց հետո մեր պետությունն է հոգում ծախսերը, կեցությունը ապահովում է հյուրընկալ ընտանիքը, որը երեխային կտրամադրի նախաճաշ, ընթրիք ու նաեւ շաբաթ-կիրակի օրերը երեխան կանցկացնի այդ ընտանիքի հետ՝ ըստ նրանց կազմած ծրագրի»: Ծրագրին մասնակցում են Եգիպտոսի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Վրաստանի, Ֆրանսիայի, ՌԴ-ի, Ուկրաինայի հայ համայնքների նախապես ընտրված 14-25 տարեկան պատանիները, որոնց նախապես բաժանվել է հարցաթերթիկներ եւ ըստ նրանց նախասիրությունների էլ նրանք բաժանվել են հյուրընկալ ընտանիքներին:

**«Ազգի»** այն հարցին, թե ի՞նչ սկզբունքով են ընտրվել ընտանիքները, արդյոք դրանք ինչ-որ շա՞հ են ակնկալում, այդ ընտանիքների հետ երեխաները չե՞ն ունենա հոգեբանական, լեզվական ու կենցաղային խնդիրներ, տկն Ազիզյանը պատասխանեց. «Համայնքի ղեկավարների հետ ընտրվել են համապատասխան դպրոցներ, որոնց տնօրենները ստանձնեցին հյուրընկալ ընտանիքների գտնելու գործը ու սկսվեց ընտանիքների հայտարարագրումը, որից հետո նաեւ հատուկ հարցաշարերի լրացումը: 40 հոգանոց հանձնաժողովը տուն առ տուն այցելել է ու մանրամասն բացատրել է ծրագրի իրականացման սկզբունքները, ստուգել է բոլոր հարմարությունները: Այսօր արդեն ստուգված, 470 ընտանիք պատրաստ է 2 շաբաթով ընդունել սփյուռքից ժամանած երիտասարդի: Այն քաղաքամասերում, որտեղ հյուրընկալվելու են երեխաները, կլինեն հատուկ հսկողություն սահմանող պարեկային խմբեր, չնախատեսված դեպքերը արագ կանխելու համար: Հատուկ մանկավարժ-հոգեբաններ են ընտրվել, որոնք կհանդիպեն ընտանիքի եւ հյուրի հետ ու առաջացած բոլոր խնդիրները տեղում կլուծեն: Իսկ եթե առաջանան այնպիսի լուրջ խնդիրներ, որոնք տեղում հնարավոր չլինի լուծել, մենք ունենք պահուստային շատ ընտանիքներ, որտեղ էլ կտեղափոխվի երեխան»:

Ծրագիրը ընդգրկում է՝ պատմամշակութային վայրերից մինչեւ հայկական ճաշերի պատրաստման, համտեսի, համայնքի ու մարզի օր միջոցառումներ: Ծրագրի ավարտը կլինի Գեղարքունիքի մարզում, մարզի երիտասարդների հետ շփման, մերձեցման բազմաթիվ միջոցառումների շրջանակում: Իսկ երեկոյան Սեւանա կղզում խարույկի շուրջը կկայանա հրաժեշտի ու հուշագրերի հանձնման եզրափակիչ միջոցառումը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

# Պարզաբանում է կրթության նախարարը եւ խոստումներ տալիս

Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցում երեկ մեկնարկեց ֆիզիկայի լրացուցիչ քննությունը: Նախատեսված 177 դիմորդից քննության էր եկել 137-ը: Քննության ընթացքին հետեւող ԿԳ նախարար **Արմեն Աշոտյանի** խոսքերով՝ լրացուցիչ քննությունները հիմնական փուլի միասնական քննությունների նման հաջողությամբ են անցնում: Նախարարը նկատում է, որ անհիմն էին հասարակության մեջ առաջացած մտավախությունները բարձր միավորների մեծաքանակության կամ թեստերի արտահոսքերի վերաբերյալ:

«Լրացուցիչ քննությունների ժամանակ արտահոսք կամ բարձր միավորներ ոչ միայն չենք ունեցել, այլեւ ավելին՝ տարբեր առարկաներից արձանագրված միջին միավորները շատ ավելի ցածր են, քան հիմնական միասնական քննությունների ժամանակ: Այն զրույցները, որ լրացուցիչ քննություններին մասնակցում են հատուկ մարդիկ, ովքեր ուզում են այլազան ճանապարհներով ինչ-որ տարբերակներով ընդունվել բուհեր, հերքվում են», հավաստեց Աշոտյանը:

Պարզվեց նաեւ, որ լրացուցիչ վերջին քննություններին բացակայությունների մեծ թիվը պայմանավորված այն փաստով, որ նախորդ քննության ժամանակ աշակերտները անբավարար գնահատական են ստացել ու որոշել չմասնակցել հաջորդ քննություններին: Միասնական քննությունների ողջ ընթացքի դժգոհությունները հիմնականում վերաբերել են մասնավորապես հայոց լեզու, գրականություն առարկայի թեստերի բովանդակությանը: Նախարարը խոստացավ, որ այդ թերությունները էլ կշտկվեն:

Հուլիսի 15-ից հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում կսկսվեն կենտրոնացված եւ ներբուհական քննությունները: Այս կերպ քննական գործընթացը թեւակոխում է 3-րդ՝ նախավերջին փուլ. բանավոր քննություններ կկազմակերպվեն լեզուներից, կլինեն ստեղծագործական մրցույթ-շարադրություն ժուռնալիստիկայի ֆակուլտետի համար, ներբուհական քննություններ՝ արվեստի բուհերում:

Հայտնի է քննական հանձնաժողովի կազմը: «Ընդգրկել ենք լավագույն մասնագետներին, ովքեր կազմակերպչական փորձ ունեն: Լեզուների քննություններին հանձնաժողովներում ներգրավված են Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական եւ ԵՊՀ-ի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական եւ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի մասնագետները: Մի շարք հանձնաժողովներում կան նաեւ դպրոցների ուսուցչուհիներ», տեղեկացրեց նախարարը:

Այս տարի ատեստատների ընդունման ժամկետը երկարաձգվել է մինչեւ հուլիսի 23-ը: «Դա արվել է հօգուտ դիմորդի, քանի որ դպրոցներում ինչ-ինչ կազմակերպչական խնդիրների պատճառով շատերը չեն հասցրել ներկայացնել ատեստատները: Որոշում է կայացվել երկարաձգել, որպեսզի դիմորդը դրանից չտուժի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ղարաբաղյան հարցով մտահոգված են նաեւ հայ բլոգերները

Երեկ «Արմաս» ակումբում հայկական բլոգոսֆերայի 4 ներկայացուցիչներ անդրադառնալով Մադրիդյան սկզբունքներին՝ կարծիք հայտնեցին, որ դրանց կիրառումը կարող է նոր պատերազմի հանգեցնել: Ազատագրված տարածքները հանձնելուց հետո, ըստ ակումբի հյուրերի, Ղարաբաղից եւ Սյունիքից հայերը կսկսեն արտագաղթել, քանի որ կկորցնեն անվտանգության երաշխիքները: Բլոգերներից **Հայկ Բալանյանը** նշեց, որ միջազգային ուժերը անվտանգության երաշխիքներ չեն կարող տալ: Բալանյանի խոսքերով, տարածքների հանձնումը կհանգեցնի ճակատային գծի եռակի ընդլայնման, ինչն էլ մեր զինված ուժերի համապատասխան ընդլայնում կպահանջի:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ միջնորդական առաքելությանը, ապա, ըստ Բալանյանի, համանախագահող երկրներն իրենց շահերն են հետապնդում այս տարածաշրջանում, եւ վերջիններիս ձեռ չի տալիս ներկայիս սահմանների դասավորությունը. «Նրանք մեզ նոր պատերազմի են դրդում: Գործնականում հայերը եւ ադրբեջանցիները թնդանոթային միս են դառնում այս մեծ խաղի մեջ»:

«Երեւանը Ղարաբաղին եւ Բակո Սահակյանին կստիպի ստորագրել այդ պարտվողական համաձայնագիրը եւ ողջ մեղքը կգցի ղարաբաղցիների վրա, ասելով. «Եթե նրանք չեն ուզում, ի՞նչ կարող ենք անել», ասում է Բալանյանը:

Հայաստանյան բլոգերները հայտարարություն են տարածել Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ եւ պահանջել ՀՀ արտգործնախարարի հրաժարականը: Բլոգեր **Վարուժան Գեղամյանը** «Արմաս» ակումբում տեղեկացրեց, որ ընդամենը մի քանի ժամվա ընթացքում իրենց հայտարարությանը միացել են ավելի քան 200 հոգի:

Ն. Մ.

# Երեւանում կկառուցվի «Հիլտոն» հյուրանոց

*1-ին էջից*

Սենյակների արժեքը սեզոնային ժամանակահատվածում կլինի 150-200 դոլարին համարժեք դրամ, իսկ ոչ սեզոնային ժամանակահատվածում՝ 120-150 դոլարին համարժեք: Հարցին, թե արդյոք այդ գները թանկ չե՞ն զբոսաշրջիկների համար, Գարի Բեդյանը պատասխանեց, որ խմբերով եկող զբոսաշրջիկների համար հյուրանոցային սենյակների արժեքը մոտ 50 տոկոսով ցածր կլինի:

«**Ազգի**» հարցին, թե որքա՞ն ներդրումներ են կատարվելու եւ ի՞նչ աղբյուրներից, ամերիկահայ գործարարը պատասխանեց, որ ներդրումները կկազմեն 25-30 մլն դոլար: Ներկայումս 5 մլն դոլար է ներգրավվել չինական մի ընկերությունից, մնացած գումարը ձգտելու են ստանալ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկից կամ ԱՄՆ կառավարության OPIC գործակալությունից: Գարի Բեդյանը կարեւորեց «Հիլտոն» ապրանքանիշի հայտնվելը Հայաստանում, որը միջազգայնորեն ճանաչված անուն է: Նա նաեւ հայտնեց, որ այդ ընկերությունն է իրականացնելու նորակառույց հյուրանոցի մենեջմենտը:

Հյուրանոցում տեղակայվելու են արեւային տաքացուցիչներ եւ արեւային կայաններ, օգտագործվելու է տեղական արտադրության ապրանքը՝ սկսած կահույքից մինչեւ տեղեկատվական տեխնոլոգիաներ: Այս մասին վերջում ավելացրեց ՀԱԱՊ փոխնախագահ Արամ Վարդանյանը:

AZG NEW 4.QXD 7/14/2009 10:34 PM Page 1



# «Մենք փաստացի ներկայություն ենք երկրում, ոչ իրավական»

***Վրաստանում հայկական եկեղեցիների կարգավիճակը եւ վիրահայոց թեմի գրանցման հարցն այսօր թեմի առջեւ ծառացած առաջնային խնդիրներն են: Ի՞նչ է արվում այս ուղղությամբ եւ որո՞նք են լուծման հնարավորությունները: «Ազգի» հարցերին պատասխանում է վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:***

**- Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ տալու բանակցությունները Վրաստանի կառավարության եւ թեմի միջեւ տարիների պատմություն ունեն: Ի՞նչ փուլում են այժմ բանակցությունները:**

- Վերջին չորս ամիսներին բանակցություններ են վարվել Վրաստանի վերաինտեգրման նախարար Թեմուր Յակոբաշվիլու հետ: Նա հավաստիացրել է, որ Վրաստանի օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելով եւ համապատասխան օրենքի ընդունման դեպքում Վրաստանի տարածքում գործող ավանդական չորս կրոնական համայնքները՝ հայ առաքելական եկեղեցին, հռոմեական կաթոլիկ եկեղեցին, իսլամական եւ հրեական համայնքները հնարավորություն կունենան գրանցվելու եւ դառնալու հանրային իրավունքի սուբյեկտ: Սա հնարավորություն կտա դառնալու իրավահաջորդն ու ժառանգորդն այն ամբողջ հոգեւոր մշակույթի, որ դարերի ընթացքում ստեղծվել է Վրաստանի տարածքում: Սակայն նախարարի հետ տեղի ունեցած զրույցները, որոնք լուրջ բնույթ են կրել, շոշափելի որեւէ արդյունք չեն տվել: Մարտ ամսին տեղի ունեցած վերջին զրույցի ընթացքում նա հավաստիացրեց, որ օրենքի նախագիծը պատրաստ է եւ կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի խորհրդարան: Ընդդիմության ցույցերի պատճառով այս գործընթացը հավանաբար կձգձգվի: Օրենքով կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը Վրաստանի ժողովրդավարական գործընթացներից մեկն է եւ հույս ունենք, որ օրենքը կընդունվի, բայց թե ինչպես կլինի՝ Աստծուն է հայտնի: Այցելությունները, հանդիպումները կառավարության ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել կրոնական մյուս համայնքների հետ, որովհետեւ բացի վրաց եկեղեցուց, բոլոր մյուս կրոնական համայնքներն օրենքով գրանցված չեն:

Օրենսդրական կարգավիճակ չունենալը ծանր վիճակ է ստեղծում թեմի համար: Մեր եկեղեցիները, եկեղեցապատկան հողերը, շենք շինությունները որեւէ իրավական ձեւակերպումով չեն պատկանում թեմին: Մենք փաստացի ներկայություն ենք երկրում, ոչ իրավական: Թեմը լեցուն խնդիրների առջեւ է կանգնում, երբ պետք է եկեղեցի նորոգենք, նոր շինություն կառուցենք: Այս ամենն անհնար է դառնում, որովհետեւ մենք իրավաբանական անձ չենք: Երբ դիմում ենք եկեղեցիների վերադարձման հարցով, մեզ պատասխանում են, թե ո՞ւմ վերադարձնենք, դուք իրավաբանական անձ չեք: Եկեղեցիների վերադարձը կախված է օրենքի ընդունումից:

**- Օրենքի ընդունումը ի՞նչ երաշխիքներ կարող է տալ վիճահարույց եկեղեցիների վերադարձի համար:**

- Վիճահարույց եկեղեցի հասկացությունը արհեստականորեն ստեղծված տերմին է: Պարզապես ոմանք չեն հասցրել Թբիլիսիի մյուս յոթ եկեղեցիների նման Նորաշենն էլ դարձնել վրացական եւ այն մնացել է այսպես կոչված վիճահարույց: Օրենքի ընդունումով հուսով ենք, որ կամաց-կամաց կլուծվի նաեւ այդ խնդիրը: Այն եկեղեցիները, որոնք արդեն վրացական են դարձել, դրանց վերադարձը գրեթե անհնարին է: Մենք այժմ պահանջում ենք մեր հինգ եկեղեցիները՝ Սուրբ Նորաշեն Աստվածածինը, Սուրբ Նշան եկեղեցին, Մուղնեցոց Սուրբ Գեւորգը, Երեւանցոց Սուրբ Մինասը, Շամխորեցոց Կարմիր Ավետարանը:

Շամխորեցոցը փլված է, Երեւանցոց եկեղեցին՝ կիսափուլ, Մուղնեցոց Սուրբ Գեւորգը եւ Սուրբ Նշանը վթարային շատ լուրջ վիճակում են, մխիթարականը Նորաշենն է, բայց այս եկեղեցին էլ շատ լուրջ ճեղքեր ունի: Հարցը բարձրացրել ենք Վրաստանի կառավարության առջեւ: Նրանք բանավոր խոստացել են նորոգել Նորաշենը, ոչ իբրեւ հայկական եկեղեցի, այլ իբրեւ Վրաստանի մշակութային կոթողներից մեկը: Վրաստանի պետության մոտեցումն այդպիսին է՝ առանց պատկանելության հարցի: Իհարկե, լավ կլիներ, եթե պետությունը հայ մասնագետների հետ կազմակերպեր եկեղեցու նորոգությունը: Մյուսը Ախալցխայի



Սուրբ Նշան եկեղեցին է, որը նույնպես իննսունականներից այսպես կոչված վիճահարույց եկեղեցիների շարքին է դասվել:

«Վրաց հասարակությունը դեմ չէ հայկական եկեղեցիների վերադարձին: Մարդիկ հասկանում են, որ եթե եկեղեցիները հայերինը չլինեին, դժվար թե մենք վրացական եկեղեցու հանդեպ իրավունքներ ներկայացնեինք: Այդ եկեղեցիները պաշտոնապես պետության հաշվեկշռում են գտնվում եւ լուրջ պատմական արժեք են ներկայացնում: Էջմիածնի օգնությամբ այժմ վերանորոգվում է Թբիլիսիի Հավլաբար թաղամասի Սուրբ Էջմիածին եկեղեցին, իսկ գործում է միայն Սուրբ Գեւորգը:

**- Ո՞րն է, Ձեր կարծիքով, օրենքի ընդունման ձգձգման պատճառը:**

- Այստեղ միշտ այն մտավախությունն է եղել, թե իբր կրոնական փոքրամասնություններին գրանցելով աղանդավորությունը կարող է աճել: Կարծում եմ, դա այնքան էլ մտահոգիչ չէ Վրաստանի համար, որովհետեւ աղանդավորությունն այստեղ առավել տարածված է ազգային կրոնական փոքրամասնությունների մեջ: Դա սոցիալական բնույթի խնդիր է եւ վրացական միջավայրում աղանդավորությունը քիչ է: Գրանցման դեպքում մեզ տրվելու է թեմական կարգավիճակ: Այն աղանդները, որոնք գործում են այստեղ, գրանցված են որպես ոչ պետական հասարակական կազմակերպություն:

**- Ո՞րն է վրաց եկեղեցու դերն այս գործընթացում:**

- Վրացական եկեղեցին որեւէ դերակատարություն չունի իրավական տեսանկյունից, սակայն ունի բարոյական մեծ նշանակություն: Վրաց ուղղափառ եկեղեցին երկրում լուրջ ազդեցություն ունեցող հաստատություն է, պետական պաշտոնյաները նրանց հետ նմանատիպ հարցերում մշտապես խորհրդակցում են: Պատրիարքարանն այս հարցին դրական պատասխան է տվել: Օրենքի ընդունմանը կողմ են, քանի որ հարցը հավասարապես վերաբերում է ինչպես քրիստոնեական, այնպես էլ իսլամական եւ հրեական համայնքներին: Իսկ պատրիարքարանի հետ մեր հարաբերությունները մնում են փոխադարձ հարգանքի մակարդակով, եթե հաշվի չառնենք այն մեկ-երկու վրաց քահանաներին, ովքեր ոտնձգություններ են կատարել մեր եկեղեցիների նկատմամբ: Այդ քահանաներն այժմ ծառայության են տեղափոխվել այլ վայր եւ գոնե այս փուլում խոչընդոտներ հարուցող մարդիկ չունենք:

**- Ի՞նչ փուլում է Ջավախահայության թեմի հռչակման գործընթացը:**

- Այս հարցն առկա է 1830-ական թվականներից ի վեր: Երբ Էրզրումի հայությունը տեղափոխվեց Ջավախք եւ միացավ հնուց ի վեր այնտեղ բնակվող հայերին, առաջացավ թեմ հիմնելու հարցը: 2001 թվականին Վեհափառ հայրապետը Բաքկեն աբեղային նշանակելով Ջավախքի առաջնորդական փոխանորդ՝ հաստատեց Ջավախքի փոխառաջնորդությունը: 2005 թվականից Վեհափառ հայրապետի օրհնությամբ փոխառաջնորդությանն ամբողջությամբ ինքնուրույնություն ենք տվել: Առանձին թեմի հռչակումը Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասության մեջ է մտնում եւ կախված է միայն Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից: Վրաստանի տարածքում ապրող հայության ուղիղ կեսն ապրում է Սամցխե-Ջավախք-Ծալկայում: Հաշվի առնելով այդ տարածքի էթնոսի հոգեբանությունը, մոտեցումները՝ կարծում ենք, որ առանձին թեմ եւ առանձին եպիսկոպոսական աթոռ ունենալով ավելի արդյունավետ կարող ենք աշխատել: Նույնն է նաեւ Միացյալ Նահանգներում, ուր կա արեւմտյան թեմ Լոս Անջելես կենտրոնով եւ արեւելյան թեմ՝ Նյու Յորք կենտրոնով: Իրանը երեք թեմ ունի, Ռուսաստանը՝ երկու:

**- Նոր եկեղեցիների կառուցման կարիք զգացվո՞ւմ է:**

- Կարիք կա հին եկեղեցիների վերադարձի եւ վերանորոգության: Սա առաջնահերթն է: Իսկ նոր եկեղեցիների կառուցման անհրաժեշտություն Թբիլիսիում, իհարկե, կա: Թբիլիսիում հարյուր հազարից ավելի հայ բնակիչ է ապրում եւ միայն Սուրբ Գեւորգ եկեղեցին բավարար չէ: Սուրբ Գեւորգ եկեղեցին այսօր ունի չորս քահանա, իսկ թեմը՝ տասներկու: Հստակապես մեծ տոներին ակնհայտ է, որ մեկ եկեղեցին բավարար չէ: Այս տարի Զատիկի տոնին եկեղեցու մոտ հսկա հերթ էր գոյացել: Այս տարի առաջին անգամ էր, որ Զատիկի տոնը նշեցինք Էջմիածնի տոմարով: Վերջին 150 տարիներին ինչպես Վրաստանում, այդպես էլ Ռուսաստանում, տոները նշվում էին հին տոմարով, որն էլ համընկնում էր վրաց եկեղեցու զատիկին: Վերջին տարիներին մենք քայլ արեցինք վերադառնալու Էջմիածնի տոմարին, որովհետեւ այն մեր հոգեւոր կենտրոնն է եւ մենք պարտավոր ենք նրա հետ նշել մեր եկեղեցական տոները: Այս տարվանից այլեւս բոլոր տոները նշել ենք Սուրբ Էջմիածնի տոմարով, եւ պետք է ուրախությամբ նշենք, որ մեր ժողովուրդը պաշտպանեց այս որոշումը: Սա արդեն լուրջ քայլ էր: Ես բանավոր Վեհափառ հայրապետին ներկայացրել եմ մեր որոշման մասին, մոտ ժամանակներս պետք է նաեւ գրավոր դիմեմ, որպեսզի ստանանք Վեհափառի կոնդակը եւ պաշտոնապես ժողովրդին տեղեկացնենք, որ հոգեւոր պետը իր օրհնությունն է տալիս մեր տոմարին անցնելու համար:

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**
**Թբիլիսի**

# «Օրերի» հերթական թողարկումը՝ նվիրված կանանց




**«Օրեր» հանդեսի հերթական թողարկումը՝ այս տարվա երկրորդ համարը նախորդներից մի փոքր տարբեր է: Հանդեսն այս անգամ տուրք է տվել կանանց միամսյակ հռչակված հայաստանյան գարնանային տոնին եւ մեր հանրային-մշակութային կյանքում ինչպես նշանավոր, այնպես էլ քիչ ճանաչված մի քանի կանանց հետ հարցազրույցներով փորձել է ստեղծել ժամանակակից հայ կնոջ ընդհանուր նկարագիրը՝ հոգեբանությունը, մտահոգությունները: «Օրերի» հյուրերն են սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանը, հոգեբան-արձակագիր Էլդա Գրինը, բանաստեղծուհի Սոնա Վանը եւ ուրիշներ: Նրանց հետ զրույցը Հակոբ Ասատրյանը, սովորության համաձայն, սկսում է ամենասկզբից՝ մանկություն, ընտանիք, կրթություն: Կյանքի իրենց փորձառությունից ու առանձնահատկություններից այս կանայք փորձում են յուրովի գնահատել ժամանակը, հայ կնոջ հետ կատարվող փոփոխությունները եւ դրանց ազդեցությունները մասնավորապես ընտանեկան հարաբերությունների վրա՝ քննելով բարոյականության, ազատության, ստեղծագործական եւ այլ խնդիրներ:**

**Էլդա Գրին**-Ճանաչված հոգեբան, երկար տարիներ դասախոսել է պետհամալսարանում, զուգահեռ նաեւ պատմվածքներ գրել, հրատարակել է մի քանի ժողովածու՝ նաեւ ռուսերեն եւ չեխերեն: Ընտանիքի հոգատար կին, չորս զավակների մայր, որոնք ճանաչված ու սիրված են հանրության մեջ (լեզվաբան Սամվել Աբրահամյան, դաշնակահար Մարինե Աբրահամյան, դերասանուհի Աննա Էլբակյան, նկարիչ Տիգրան Աբրահամյան): Էլդա Գրինի հետ զրույցում շոշափվում են հարցեր՝ ընտանեկան ավանդույթների, դրանց պահպանման անհրաժեշտության, ժամանակակից կնոջ կերպարի աղավաղման, կին, տղամարդ հարաբերությունների, սիրո մասին:

**Սոնա Վան**-Մշակութային միջավայրում ծանոթ է որպես բանաստեղծուհի, «Նարցիս» գրական հանդեսի հիմնադիր-հրատարակիչ: Մասնագիտությամբ բժիշկ-հոգեբան է, տասնամյակներ առաջ Երեւանից տեղափոխվել է ԱՄՆ: Բանաստեղծական երեք ժողովածուի հեղինակ է, վերջինն արժանացել է մշակույթի նախարարության ոսկե մեդալին, որը թարգմանվել է վրացերեն: Զգացմունքային-հոգեբանական, ինչ-որ տեղ ինքնաճանաչողական-փիլիսոփայական վիճակների բանաստեղծական աշխարհ է նա ստեղծում: «Հայրենիքի ցավագին կարոտաբաղձությամբ չեմ տառապել: Ոչ թե այն պատճառով, որ չեմ սիրել հայրենիքը, այլ ես հոգեբանորեն այն չեմ կորցրել, որ դրա պակասից տառապեմ», ասում է նա:

**Հրանուշ Հակոբյան**-Արմատներով Արեւմտյան Հայաստանից, նախնիք Բայազետից գաղթել են Նոր Բայազետ (Կամո, այժմ Գավառ): Աշխատանքային հարուստ փորձը եւ կենսագրությունը բաժանվում են խորհրդային եւ հետխորհրդային շրջանների: Մասնագիտությամբ մաթեմատիկոս՝ տարիներ դասավանդել է պետհամալսարանում, ղեկավարել համալսարանի երիտասարդական կազմակերպություն, ակտիվ նախաձեռնողն է եղել բնապահպանական, ծխախոտի դեմ պայքարի շարժումների, ծիծեռնակաբերդում ցեղասպանության թանգարան ստեղծելու, Անդրանիկի աճյունը Հայաստան տեղափոխելու ծրագրերի: Ակտիվ աշխատանքներ է կատարել 1988-ի երկրաշարժի օրերին իր ստեղծած «Որոնում» ծրագրի միջոցով: ՀԼԿԵՄ կենտկոմի առաջին քարտուղար է եղել: Կուսակցական ղեկավարի աշխատանքային փորձը նրան օգնել է Հայաստանի անկախացման նոր փուլում եւս պետական լայն գործունեություն ծավալելուն: Երկար տարիներ Ազգային ժողովի պատգամավոր, գիտության եւ կրթության մշտական հանձնաժողովի նախագահ, այժմ արդեն սփյուռքի նախարար է, Հայաստան-սփյուռք հարաբերությունների նոր, ավելի արդյունավետ ծրագրերի, դրանց իրագործման լուրջ փորձեր է ձեռնարկում: Ենթադրելի էր, որ Հրանուշ Հակոբյանի համար կյանքում առաջնայինը հանրային-աշխատանքայինն է, եւ օրինաչափ են որպես սկզբունք իր ընտրած բանաստեղծական-փիլիսոփայական մտքերը՝ Մ. Մեծարենցի «Տո՜ւր ինձի, տեր, ուրախություն անանձնական»-ը եւ Հ. Թումանյանի «Գործն է անմահ, լավ իմացեք»-ը:

**Սալբի Ղազարյան**-ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի խորհրդական, Armenian International Magazine ամսագրի խմբագիր, այժմ «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն: Ծնվել է Հալեպում, երկար տարիներ ապրել է Լոս Անջելեսում, վերջին տասը տարիների բնակության վայրը Հայաստանն է: Հարցազրույցը ներկայացնում է Սալբի Ղազարյանի աշխատանքային գործունեությունը, AIM-ի՝ միջազգային տարածում ունեցած առաջին հայկական ամսագրի դերն ու նշանակությունը: Ուշագրավ են նրա՝ արտգործնախարարությունում աշխատած տասը տարիների, Վարդան Օսկանյանի ղեկավարած շրջանի գնահատումները. «Այնտեղ (ԱԳՆ-ում) ստեղծվեց բաց, անկեղծ, պարկեշտ միջավայր»: «Մենք պետք է միջազգային ասպարեզներում կարողանանք ստեղծել մեր խաղաքարտերը, որպեսզի մի բան ունենանք ներդնելու, մասնակցելու տարբեր ընթացքներին, մեր վարկը բարձրացնելուն: Ինձ թվում է, որ վերջին տասը տարիներին դա հաջողվեց»:

**Նորաստեղծ «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնական նպատակը, ըստ նրա, նպատակային քննարկումների միջոցով իշխանությունների եւ հասարակության երկխոսությանը նպաստելն է:**

**«Կանանց թեման» շարունակվում է պարսկահայ երիտասարդ գրող Նաիրի Նահապետյանի «Ով է սպանել այաթոլլահ Կանունիին» վեպի մասին Ալ. Թոփչյանի անդրադարձով, որը, ըստ ֆրանսիական մամուլի, համարվել է իրանական առաջին դետեկտիվը: Բալետի պարուհի Եկատերինա Մաքսիմովնայի ստեղծագործական ուղուն եւ դրա հայկական առնչություններին է անդրադառնում Արծվի Բախչինյանը: Մարզային աշխարհի նշանավոր հայուհուն, բռնցքամարտի աշխարհի չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանին ներկայացնում է Անահիտ Հովսեփյանը:**

**Գայանե Հարությունյանը «Օրերի» էջերում ներկա է Պրահայում արված իր լուսանկարներով: Հակոբ Ասատրյանը զրուցել է նաեւ Գայանե Բրեյովայի (չեխ-հայկական խոհանոցով ռեստորանի տնօրեն), չեխական էստրադայի եւ թատրոնի հայտնի դերասանուհի Մոնիկա Աբսոլոնովայի հետ:**

**Թեմայից դուրս կան այլ հրապարակումներ եւս՝ հայ-չեխական պատմական առնչությունների մասին Արծվի Բախչինյանի հոդվածը, քաղաքական (Պրահայում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներ), մշակութային եւ այլ տեղեկություններ:**

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Թուրքական սփյուռքին ուղղորդում է Անկարան

## *Դա պետք է ուսանելի լինի ինչպես սփյուռքահայության, այնպես էլ հայաստանյան իշխանությունների համար*

«**Ազգը**» հուլիսի 10-ի համարում «Թուրքական սփյուռք» վերնագրով նշել էր, որ թուրքերի արտահոսքը Գերմանիա սկսել է 1960-ականներին, 70-ականներին նրանք գաղթել են եվրոպական այլ երկրներ, մասնավորապես Հոլանդիա, Ֆրանսիա, 80-ականներին՝ կապված ԱՍԱԼԱ-ի գործունեության հետ, որը վերստին միջազգային հանրության օրակարգ մտցրեց Հայկական հարցը, Եվրոպայի թուրքերը կազմավորվեցին իբրեւ համայնքներ, որոնց ակտիվ զանգվածը Թուրքիայի անմիջական միջամտությամբ քաղաքականացվեց, ստեղծելով եվրոպական երկրներում Անկարայից ուղղորդվող բազմաթիվ միություններ եւ կազմակերպություններ:

Դրանց գործունեությունը ներկայումս համակարգում է Եվրոպայի թուրքերի պլատֆորմը, որին էլ վերահսկում է ԱՄՆ-ում գործող «Թուրքական ֆորում» կազմակերպությունը, ունենալով կենտրոնական վարչության կազմում Թուրքիայի վարչապետարանի եւ արտգործնախարարության խորհրդականներ:

Մեր թերթում միաժամանակ նշվել էր, որ Եվրոպայի թուրքական համայնքները փորձում են ոչ միայն հակակշռել սփյուռքահայության Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերը, այլեւ լոբբիստական բուռն գործունեություն են ծավալում ի նպաստ Թուրքիայի եւ ստանձնում առաջադրանքներ: Օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու համար այս համայնքների ներկայացուցիչները եվրոպական երկրներում ներթափանցում են խորհրդարաններ եւ զգալի թիվ են կազմում տվյալ երկրի տեղական ինքնակառավարման մարմիններում:

Ակնհայտ է, որ եվրոպական երկրների խորհրդարաններում եւ տեղական ինքնակառավարման մարմիններում թուրքերի թվի աճին զուգընթաց կաճի նաեւ Թուրքիայի ազդեցությունը, եւ թուրքական լոբբին հետզհետե կդառնա ազդեցիկ գործոն: Համենայն դեպս, 372 մլն բնակչություն ունեցող Եվրոպայում բնակվում են 14 մլն մահմեդականներ, որոնք բնակչության 5 տոկոսն են կազմում: Մահմեդականներից 4 մլն-ը Թուրքիայի քաղաքացիներ են, որոնցից 2,5 միլիոնը բնակվում է Գերմանիայում, 380 հազարը՝ Ֆրանսիայում, 320 հազարը՝ Հոլանդիայում, 140 հազարը՝ Ավստրիայում, 100 հազարը՝ Բելգիայում, 10 հազարը՝ Իտալիայում:

Չհաշված Անգլիայում, Շվեյցարիայում բնակվող թուրքերին, 150 հազարանոց թուրք բնակչություն ունի նաեւ Հունաստանը, որը թերեւս օսմանյան շրջանից է մնացել: Ինչ վերաբերում է շուրջ 300 մլն բնակչություն ունեցող ԱՄՆ-ին, ապա այստեղ բնակվող թուրքերի թիվը 400 հազարի է հասնում, որը թերեւս թուրքական սփյուռքի ամենակրթված եւ կազմակերպված հատվածն է:

Եվրոպայում բնակվող շուրջ 4 մլն թուրք բնակչություն 850 հազարն ունի ընտրելու իրավունք, 500 հազարն ստացել է Գերմանիայի քաղաքացիություն, 40 հազարը բարձրագույն կրթություն է ստանում եվրոպական տարբեր համալսարաններում, իսկ 60 հազար թուրք ձեռներեցների, որոնք 400 հազար աշխատատեղ են ստեղծել, տարեկան եկամուտը, Գերմանիայի գլխավորությամբ տարբեր երկրներում, հասնում է 30 մլրդ դոլարի:

Եվրոպական երկրներում գործում են մեծ ու փոքր թուրքական ավելի քան 5 հազար միություններ եւ կազմակերպություններ, որոնցից 3 հազարի գործունեությունը համակարգում է Եվրոպայի թուրքերի պլատֆորմը: Հատկանշական է, որ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցությունը մերժում են այն երկրները, որոնք Եվրոպայում ունեն առավելագույն թուրք բնակչություն՝ Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան: Փոխարենը Իսպանիան կամ 10 հազար թուրքեր բնակեցնող Իտալիան պաշտպանում են Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին: Ավելին, Գերմանիայի բնակչության 56 տոկոսը դեմ է, որ Թուրքիան եվրոպական ընտանիքին մաս կազմի, իսկ յուրաքանչյուր երկու գերմանացիներից մեկն, ըստ հարցման արդյունքների, ասում է. «Ես թուրքերի հետ նույն շենքում չեմ բնակվի»:

Այս տվյալները քաղել ենք Գյոքնուր Աքչադաղի Նյու Յորքի Turkishny.com կայքէջում հրապարակված հոդվածից, որտեղ հեղինակը 17 միլիոնանոց Հոլանդիան համարելով թուրքերի համար ամենաիդեալական երկիրը Եվրոպայում, նշում է, որ նրանք երկրի խորհրդարանում ունեն երեք պատգամավոր, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ 110 ներկայացուցիչներ: Կարծում ենք, այս փաստը ուսանելի պետք է լինի հայկական սփյուռքի, իսկ պաշտոնական Անկարայի աջակցությունը թուրքական սփյուռքին՝ հայաստանյան իշխանությունների համար:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Courier UNESCO-ն կխոսի՞ արդյոք հայերեն լեզվով




ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ռուսական համամշակութային բնույթի պարբերականները ռուսերենին ազատ տիրապետող հայ ընթերցողի համար դարձան անհասանելի, իսկ նմանատիպ հայկական պարբերականներ չստեղծվեցին: Դրանց փոխարեն ստեղծվեցին բազմաալիք հեռուստատեսությունն ու ինտերնետը, որոնք, ի տարբերություն անհատական ընթերցանության, չէին կարող նպաստել ստեղծագործելու ունակ ազգային երեւակայությանը:

Խորհրդային տարիներին թերթի կրպակներում չնչին գումարներ արժեցող տասնյակ ամսագրերի շարքում առանձնանում էր Փարիզում Courier անվամբ ֆրանսերեն եւ անգլերեն լեզուներով հրատարակվող ամենամյա UNESCO պարբերականը (ՄԱԿ-ի կրթության, գիտության եւ մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպություն): Պարբերականի ռուսերեն թարգմանությունն ու հրատարակումը UNESCO-ի հարցերով զբաղվող ԽՍՀՄ հանձնաժողովի հանձնարարությամբ սահմանափակ տպաքանակով իրականացնում էր Մոսկվայի «Պրոգրես» հրատարակչությունը:

Բովանդակային նկարազարդումներով պատված Courier-ի շապիկը, ինչպես եւ պատվիրված հոդվածները ներկայացնում էին ապրող եւ անհետացած ժողովուրդների մշակութային նվաճումները եւ մշակույթների փոխկապակցված համատեքստում կարեւորում մշակույթի միջոցով փոխըմբռնման հասնելու հնարավորությունն ու անհրաժեշտությունը, մշակույթ բառի ամենալայն իմաստով: Կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտները պարզաբանող պարբերականի թեմատիկ համարներն աչքի էին ընկնում իրենց յուրահատկությամբ: Courier-ի երկրպագուները գրապահարաններում պարբերականի հաջորդական համարներով ստեղծում էին տնային գրադարան:

UNESCO-ի անդամ մի շարք երկրների կառավարություններ Courier-ը մայրենի լեզվով թարգմանելու համար միջոցներ են հայթայթել: Այսօր պարբերականը թարգմանվում է ավելի քան 30 լեզուներով (ռուսերեն՝ 1957-ից, արաբերեն՝ 1960-ից, պարսկերեն՝ 1969-ից, թուրքերեն՝ 1972-ից, հունարեն՝ 1983-ից): Իսպանիայում հրատարակվում է երեք լեզուներով՝ իսպաներեն (կաստիլերեն), կատալոներեն, բասկերեն: Պարբերականն ունի կույր ընթերցողների համար նախատեսված տարբերակ: Բրայլի գրատիպով հավաքած պարբերականի եռամյա քաղվածքների հավաքածուն կարդալու հնարավորություն ունեն ինչպես անգլիախոս եւ իսպանախոս երկրների, այնպես եւ Կորեայի կույր ընթերցողները:

Հայաստանը դառնալով ոչ միայն ՄԱԿ-ի, այլեւ UNESCO-ի անդամ երկիր, ներառվեց վերջինիս նշակութային ծրագրերում, սակայն Courier-ի հայերեն թարգմանության հարցն այդպես էլ դուրս մնաց կառավարության օրակարգից, եթե, իհարկե ամբողջովին անտեսված չէր: Մինչդեռ պարբերականի հայերեն տարբերակը պատիվ կբերի մեր երկրին, կվկայի հայ ժողովրդի ինքնության մասին, կխթանի նաեւ հայերեն լեզվի գրագետ արտահայտումը, կհաստատի հայոց լեզվի մաքրության գնահատման մշակութային այն ձողը, որը կբացառի նվազագույն մակարդակը:

Եթե չենք ցանկանում լինել «պարտված հաղթող»-ի կարգավիճակում, ապա անհրաժեշտ է հայթայթել ֆինանսական միջոցներ անկախության արդյունքում ստեղծված բացը լրացնելու համար: Այդ նպատակի համար կարող ենք առավել արդյունավետ օգտագործել նաեւ սփյուռքի մտավոր եւ ֆինանսական հնարավորությունները, եւ չհապաղել՝ ժամանակը չի հանդուրժում ուշացումն ու դանդաղկոտությունը:

ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ

ՋԻՀԱԴ՝ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՄ

# «Ալ Ղաիդան» վրեժ կլուծի ույղուրների համար

«Ալ Ղաիդան» խոստացել է Չինաստանից վրեժ լուծել Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանում մահմեդական ույղուրների հալածանքների համար: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով «Սաութ Չայնա փոստ» թերթի հրապարակումը: Թերթն իր հերթին վկայակոչում է բրիտանական հետախուզության լոնդոնյան կենտրոնի տվյալները:

Կենտրոնի տեղեկությունների համաձայն, Մարոկկոյում, Ալժիրում եւ Թունիսում գործող «Ալ Ղաիդայի» հյուսիսաֆրիկյան մասնաճյուղը՝ «Իսլամական Մաղրիբի «Ալ Ղաիդան», սպառնում է մի շարք ահաբեկչություններ իրականացնել Հյուսիսային Աֆրիկայում աշխատող չին տարագիրների դեմ: Օրինակ, Ալժիրում մոտ 50 հազար չինացի է աշխատում:

Ընդգծվում է, որ առաջին անգամ «Ալ Ղաիդան» մահմեդականներին սրբազան պատերազմի՝ ջիհադի կոչ է անում ընդդեմ Չինաստանի: Բրիտանացի հետախույզները պնդում են, որ «Ալ Ղաիդայի» գրոհայինների շրջանում տարածվում է յուրօրինակ հրահանգ, որով կոչ է արվում չինացիների վրա հարձակվել ոչ միայն Հյուսիսային Աֆրիկայում, այլեւ Մերձավոր Արեւելքում:

Հուլիսի 10-ին Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանի իշխանությունները հրապարակեցին վարչական կենտրոն Ուրումչիում միջէթնիկական բախումների ընթացքում սպանվածների թիվը՝ 184, այդ թվում՝ 137 չինացի, 46 ույղուր. զոհերից մեկի ինքնությունը մնացել է անհայտ:

Հուլիսի 13-ին Ուրումչիում չին զինծառայողները գնդակահարեցին բողոքի ցույցի մասնակից երկու ույղուրների: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 11 մլն ույղուրները մեծամասնություն են կազմում Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանում, որը 1955 թվականից ենթակա է ՉԺՀ-ի իրավադասությանը:

# ԱՄՆ բյուջեի պակասորդն անցել է 1 տրիլիոնի սահմանագիծը

ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ պետական բյուջեի պակասորդը գերազանցել է 1 տրիլիոն դոլարի սահմանագիծը: Խոսքը 2008-ի հոկտեմբերին սկսված 2009 ֆինանսական տարվա մասին է: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով ԱՄՆ ֆինանսների նախարարությանը:

Ֆրանսպրեսը նշում է, որ հունիս ամսվա արդյունքների համաձայն, բյուջեի պակասորդը կազմել է 1,086 տրիլիոն դոլար: Մինչդեռ հունիսը սովորաբար եկամտաբեր ամիս է ԱՄՆ պետգանձարանի համար:

Վերլուծաբանները բյուջեի ռեկորդային աճի գլխավոր պատճառը համարում են ֆինանսական ճգնաժամի հաղթահարմանը եւ տնտեսության վերաշխուժացմանն ուղղված պետական ծախսերի ավելացումը, ինչպես նաեւ հարկային մուտքերի նվազումը:

Բացի դրանից, զգալի բեռ են դարձել Իրաքում եւ Աֆղանստանում կատարվող ռազմական ծախսերը:

ԱՄՆ նախագահը եւ ֆինանսների նախարարը խոստանում են երկրի տնտեսության վերաշխուժացման դեպքում ամեն ջանք գործադրել բյուջեի պակասորդը նվազեցնելու նպատակով:

# Լիտվայի նախագահը իր աշխատավարձի կեսը կտա պետգանձարանին



Լիտվայի նախագահ Դալյա Գրիբաուսկայտեն հրաժարվել է պետության ղեկավարի աշխատավարձի կեսից՝ ի նպաստ պետական գանձարանի: Ինտերֆաքս գործակալության տվյալներով, նախագահի աշխատավարձը մոտ 21 հազար լիտ է (ավելի քան 6 հազար եվրո):

Գրիբաուսկայտեն հայտարարել է, որ իրեն լիովին բավարարում է աշխատավարձի կեսը, ինչպես նաեւ որպես նախկին եվրոկոմիսարի ամեն ամիս իրեն վճարվող նպաստը: Վերջինիս չափը հարկերի վճարումից հետո կազմել է 7,9 հազար եվրո:

Նպաստը երեք տարի ժամկետով վճարվում է բոլոր նախկին եվրոկոմիսարներին, եթե նոր պաշտոնում աշխատավարձը նախորդի կեսից քիչ է: Նպաստը վճարվում է Եվրոմիության ընդհանուր բյուջեից:

Դալյա Գրիբաուսկայտեն բյուջեի եւ ֆինանսական պլանավորման գծով եվրոկոմիսարի պաշտոնը զբաղեցրել է 2004-09 թթ.: Դրանից առաջ՝ 2001-04 թթ. նա Լիտվայի ֆինանսների նախարար էր: Գրիբաուսկայտեն Լիտվայի նախագահ ընտրվել է 2009 թ. մարտի 17-ին: Պաշտոնակալությունը տեղի է ունեցել հուլիսի 12-ին:

# Սոմալիում առեւանգել են ֆրանսիացի լրագրողների

Սոմալցի գրոհայինները մայրաքաղաք Մոգադիշոյում հարձակվել են հյուրանոցներից մեկի վրա եւ այնտեղից առեւանգել երկու լրագրողների:

Հյուրանոցի աշխատակիցներից մեկը Ռոյթեր գործակալության թղթակցին պատմել է, որ հարձակումը կատարվել է հուլիսի 14-ի առավոտյան: Հարձակվողների ստույգ թիվը չի նշվում, սակայն ոստիկանությունում խոսում են մեծ թվով զինված մարդկանց մասին:

Գրոհայինները ներխուժել են Sahafi Hotel, զենքով սպառնացել են պահապանին, ապա մտել են համարներից մեկը եւ իրենց հետ տարել երկու ֆրանսիացիների, որոնք լրատվամիջոցների աշխատակիցներ են:

AZG NEW 6.QXD 7/14/2009 10:42 PM Page 1





# Ռոբ Նիլսոնի երեւակայական աշխարհը

«Ֆիլմերում միաձուլում եմ մարդկային ուժն ու գեղեցկությունը: Մայրս դեռ վաղ տարիքից անընդհատ նշում էր, որ դառնալու եմ սովորական մարդ: Ուզում եմ, որ ինձ հենց այդպես էլ ընկալեք՝ սովորական մարդ, առանց ձեւականությունների», անմիջական շեշտադրությամբ սկսեց հանդիպումը ամերիկացի հանրահայտ ռեժիսոր **Ռոբ Նիլսոնը**:

«Ոսկե ծիրան» կինոփառատոնը մի քանի օր շարունակ կցուցադրի ռեժիսորի մի շարք հայտնի ֆիլմեր: 2005-ին նկարահանված «Կարիք» ֆիլմը ժամանակին մեծ աղմուկ հանեց: Զարմանալիորեն ռեժիսորը բացահայտել էր կարիքն ու մեծանի մասին կամ ծանոթ են նրա ստեղծագործություններին: Սկզբունքներին հավատացող արվեստագետ է, որ ստեղծագործում է Հոլիվուդից անկախ: Ազատ մտածող է: Դա տեսակի, կյանքի եւ ստեղծագործելու սեփական ճանապարհի ընտրության հարց է», Նիլսոնի արվեստն ու էությունն այսկերպ ներկայացրեց կինոգետ Միքայել Ստամբուլցյանը:

Երազները՝ արվեստի ու կյանքի մասին, խորհրդանշական են: Նիլսոնի ֆիլմարվեստը հիմնականում կառուցված է երազների ու երեւակայության վրա: Ռեժիսորը խոստովանում է, որ կինոն հավաքական արվեստ է ու շնորհակալություն հայտնում իր հանդիսատեսին. «Ապաղաքական գործիչների, այլ արվեստագետների անուններով: Հյուրանոցը, որտեղ ապրում եմ, զարդարած է նկարներով: ԱՄՆ-ում այդպիսի բան չեք գտնի: Հաճելի է, երբ արվեստն ու արվեստագետը գնահատվում են»:

«Որպես հանդիսատես, ինչպիսի՞ ֆիլմեր կփնտրեք կինոթատրոններում» **«Ազգ»**-ի հարցի պատասխանն էլ հետեւյալն էր: «Անհամբերությամբ սպասում եմ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի դիտմանը: Փարաջանովին հանդիպել եմ 1984-ին, Մյունխենում: Մինչ հանդիպումը տեսել էի «Մահացած նախնիների ստվերները» ֆիլմն ու հիացել ձեր հայրենակցի արվեստով: Երբ առաջին անգամ հանդիպեցի Փարաջանովին, զարմացած ինձ նայեց ու հարցրեց. «Ո՞վ է այս կովբոյը»: Այդ ժամանակ երիտասարդ էի ու կրում էի մեծ գլխարկ»:




գույն վարպետությամբ արտացոլել ժապավենին: Ֆիլմը պատկերում է 4 կանանց փխրուն բարեկամությունը, ընտանեկան վեճերը, մրցակցությունն ու համերաշխությունը: «Հյուսիսային լույսեր» ֆիլմում, որ 1979-ին արժանացել է «Ոսկե կինոխցիկ» մրցանակի Կաննի կինոփառատոնում, ներկայացնում է ձեղնահարկում հայտնաբերված հին, սեւ-սպիտակ լուսանկարի պատմությունը: Ծավալվող գործողություններում ակնդիրը ծանոթանում է մարդկային սիրո պատմությանը, քաղաքական պայքարի ընթացքին, ներկայացվում է ամերիկյան պատմության մոռացված դարաշրջանն ու հյուսիսային հարթավայրերի խստաշունչ գեղեցկությունը:

«Հայաստանում հազվադեպ մարդիկ կան, որ լսել են Ռոբ Նիլսոնի փողոցները անվանված են ոչ թե ռանց նրանց ոչինչ անել չէի կարող»:

Հոլիվուդից դուրս աշխատելն ունի իր վտանգներն ու խնդիրները, սակայն այդ կերպ հաստատվում ես որպես ազատ ստեղծագործող, կախված չես ոչնչից ու ոչ ոքից: Սա Նիլսոնի գաղափարախոսությունն է:

«Հանդիսատեսին շատ բան եմ տալիս, սակայն չեմ ուզում խոսքերով այն ներկայացնել: Անհատական արվեստ է: Յուրաքանչյուր ֆիլմ իր հմայքը, յուրահատկություններն ու կյանքի նկատմամբ վերաբերմունքն ունի», նկատում է ռեժիսորը:

Երեւանյան բացահայտումները բազմաթիվ են: «Փոքրիկ երկրում ունեք բազմաթիվ տաղանդավոր գրողներ, բանաստեղծներ: Ձեր քաղաքի

## Նոր եզրեր՝ վավերագրական ֆիլմերի նկարահանման համար

Նյու Յորքի «Մարգարեթ Միդ» կինոյի եւ վիդեոյի փառատոնը արտասահմանյան վավերագրական ֆիլմերի ամենածավալուն եւ առաջնակարգ ամենամյա ցուցադրությունն է ԱՄՆ-ում: Փառատոնն աչքի է ընկնում ֆիլմերի խիստ ընտրությամբ, շոշափվում են բազմազան ու հրատապ թեմաներ: Փառատոնը հիմնադրել է ազգային պատմության ամերիկյան թանգարանը մարդաբան Մարգարեթ Միդի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ: Արդեն երկու տարի այն համագործակցում է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հետ: Հայ հանդիսատեսը մեկ շաբաթվա ընթացքում հնարավորություն կունենա տեսնելու ոչ միայն փառատոնի տարբեր տարիների մրցանակակիր, այլեւ միջինասիական եւ հայկական ֆիլմերը:

«Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում զարգացնել վավերագրական ֆիլմերի կինոփառատոնը, ներկայացնել հայկական եւ տարածաշրջանային վավերագրական ֆիլմերը, խրախուսել եւ համագործակցել երիտասարդ ռեժիսորների հետ», նկատեց Նյու Յորքի կինոփառատոնի տնօրեն **Արիելլա Բեն Դովը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Աշխարհի ամենաերկար ճոպանուղին կշգվի Հալիձորից Տաթեւ

Եկող տարվա սեպտեմբերին Հալիձորից Տաթեւ կձգվի աշխարհի ամենաերկար՝ 5,7 կմ ճոպանուղին, որը կկառուցի շվեյցարական «Գարավենտա» ընկերությունը: Համապատասխան պայմանագիրը երեկ Երեւանում ստորագրեցին ճոպանուղու կառուցման բաղադրիչի ղեկավար, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) խորհրդի անդամ **Արտաշես Կազախեցյանն** ու «Գարավենտա» ՍՊԸ վաճառքների գծով փոխնախագահ **Փիթեր Բաումանը**:

«Այս ծրագիրը հիանալի ապացույցն է մասնավոր հատվածի եւ պետության համագործակցության արդյունավետության: Եվ մեծապես կնպաստի հետագայում այլ ծրագրեր էլ նույն համագործակցությամբ ի բարօրություն Հայաստանի իրականացնելու»,- պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ ասաց էկոնոմիկայի նախարար **Ներսես Երիցյանը**:

Իսկ ճոպանուղու կառուցումը մասն է ՀԱՄՀ «Տաթեւի վերածնունդ եւ վերակառուցում» եռամյա ծրագրի, որը մեկնարկել է 2009-ի փետրվարին եւ ունի չորս բաղադրիչ: Դրանցից առաջինի՝ ճոպանուղու կառուցումը կտեւի մեկ տարի եւ կարժենա 6,8 մլն եվրո: Տարեկան 100-150 նման կառույցներ իրականացնող «Գարավենտայի» ներկայացուցիչը վստահեցրեց, որ ընկերության հեղինակած բոլոր կառույցներն էլ անվտանգության բարձր մակարդակով են իրականացվում եւ ունեն անհրաժեշտ հզորությունը:

Կառուցվելիք ճոպանուղին երկու ուղղություններով 25-ական ուղեւոր տեղափոխելու հնարավորություն կունենա, կաշխատի կլոր տարին եւ կսպասարկվի «Գարավենտայի» պատրաստելիք հայ մասնագետների կողմից:




Վերջին փաստումը Արտաշես Կազախեցյանինն է:

«Տաթեւի վերածնունդ եւ վերակառուցում» ծրագիրն իրականացնում են ՀԱՄՀ-ը, Ռուբեն եւ Վերոնիկա Վարդանյանների ընկերների ստեղծած «Տաթեւ ֆաունդեյշն», ԱՌԳԱ հիմնադրամը, «Հայաստան 2020» ծրագիրը: Ծրագիրը սպասարկող բանկն էլ «Ամերիաբանկն է»:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «Ժամանակն է, որ հայ գրողները հավաքական կերպար ունենան...»

## Ասում է Հրանտ Մարգարյանը

Սփյուռքահայ գրող, բանաստեղծ, դրամատուրգ եւ բեմադրիչ Հրանտ Մարգարյանը, որը 10 հրատարակված գրքերի եւ 26 թատերախաղերի հեղինակ է, երեկ Գրողների միության եւ Ավ. Իսահակյանի անվան գրադարանի համատեղ կազմակերպած կլոր սեղանի հյուրն էր: Հրանտ Մարգարյանի թատերախաղերն առանց ընդմիջման՝ 42 տարի ներկայացվում են աշխարհի տարբեր բեմերում: Նա նաեւ 100-ից ավելի բեմադրությունների հեղինակ է ու իր ղեկավարած «Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Նյու Յորքի թատերախմբում» շուրջ 386 դերասանների հետ ստեղծել են թատերախաղերի հրաշալի մի փունջ: Հրանտ Մարգարյանը այժմ ղեկավարում է նաեւ Նյու Ջերսիի պատանեկան թատերախումբը ու տարեկան հանդիսատեսի դաշին են հանձնում մեկ առաջնախաղ եւ 10 կրկնություն: Բացի բեմադրիչ լինելուց, Հրանտ Մարգարյանը նաեւ դերասանությամբ է զբաղվել, նկարահանվել է «Բեռլինի պատվերը» ֆիլմում, որտեղ կերտել է Յոհան Լեփսիուսի դերը: Մարգարյանի գրականությունը թարգմանվել է անգլերեն, պիեսները բեմադրվել են ԱՄՆ-ի հայտնի բեմերում՝ Բրոդվեյում՝ «Հայելին», «Շրջան» եւ այլն: Ամերիկահայ գրողների անթոլոգիայում տեղ են գտել նաեւ Հ. Մարգարյանի թատերախաղերը: Հայաստանում Հ. Մարգարյանի երեք պիեսները բեմադրվել են տարբեր թատրոններում, դրանք են՝ «Շրջան», «Երբ երկնքեն երեք աթոռ ինկավ», «Ալ ժողովի չեմ երթալ», «Երբ արեւը կլռե», որը նվիրված է Ռուբեն Սեւակի կյանքին:



**«Ազգի»** հետ զրույցի ժամանակ պրն Մարգարյանը նշեց, որ առաջիկայում թատերախմբով շրջագայելու են ու ներկայացնելու են Լեւոն Շանթի 140-ամյակին նվիրված «Ճամփուն վրա» գործը: Իսկ Նյու Ջերսիի մեկ այլ թատերախմբով «Ջորջթաունի հայ տղաքը» գործը կներկայացնեն Եվրոպայում, գուցե եւ Հայաստանում:

Կլոր սեղանին մասնակցում էին գրողներ, մտավորականներ, դերասաններ եւ հյուրեր: Միջոցառումը բացեց ու վարեց ԳՄ քարտուղար **Հովհաննես Գրիգորյանը**, հանգամանալից ներկայացնելով Հրանտ Մարգարյան գրողին, բանաստեղծին, դրամատուրգին: ՀԳՄ նախագահ **Լեւոն Անանյանը** բարձր գնահատեց Հրանտ Մարգարյանի գրական ստեղծագործական անցած ողջ ուղին ու հատկապես նշեց նրա մեծ հայասեր, հայրենասեր լինելու փաստը, որը Արցախի մի «զինվոր» է իր ներդրած ուժերի ու կարողությունների հանրագումարում: Հրանտ Մարգարյան գրողին, մտավորականին ջերմ ու գնահատանքի խոսքեր հղեցին գրող **Նորայր Ադալյանը**, Իսահակյանի անվան գրադարանի տնօրենուհի **Հասմիկ Կարապետյանը**, **Սուրեն Դանիելյանը**, թատերագետ **Վարսիկ Գրիգորյանը**, բանաստեղծ **Կարո Արմենյանը**, գրող **Վարուժան Նալբանդյանը**, պատմաբան, ակադեմիկոս **Արշոս Մելքոնյանը**: Նրանց խոսքերում հնչում էին ջերմ ու բարի խոսքեր, սեր սիրված գրողի նկատմամբ, որն իր անհանգիստ բնավորությամբ մեծ ներդրում է արել հայ գրականության ու հայապահպանման, հայ լինելու, հայ մնալու խնդրում:

Յոթ տասնամյակը բոլորած գրողը իր շնորհակալական խոսքում անդրադարձավ նաեւ սփյուռքահայ գրողին, նրա բարդույթներին եւ իր ճամփան դժվարություններով հարթող գրչակիցներին: Անդրադառնալով Հայաստանի գրողներին, նշեց. «Ես նրանց ուզում եմ մտավորականներ համարել: Մեր երկիրը, որ այսօր դարձել է քաղաքական վայրիվերումների կիզակետ, մտավորականների շրջանում հավաքական կեցվածք չկա, որը ինձ մեծ ցավ է պատճառում: Եթե մեկ-երկու գրող մի քանի տողով անդրադառնում են, դա բավական չէ: Մեր այսօրվա եւ ընդհանրապես մեր խնդիրների ու հարցերի շուրջը պետք է հավաքական կեցվածք ունենան, ու դրա կարիքը ժողովուրդը շատ ունի, քանզի նա վստահում ու հավատում է գրողին, մտավորականին: Ուստի ժամանակն է, որ բոլոր գրողներս համախմբվենք եւ հավաքական կեցվածք ցույց տանք: Միայն գրող լինելը դեռ մտավորական լինել չէ, քաղաքական ու տնտեսական վիճակը պետք է լինի հենց մեր գործը, ոչ թե անգլուխ երիտասարդների, որոնք օպերայի շուրջը չրթելով, կուտ ուտելով քայլում են... Նրանք չեն, այլ մենք ենք եւ պարտականություն ունենք մեր ժողովրդի առաջ: Ուրեմն ի գործ, ի նպաստ հանուն մեր ազգի գոյատեւության»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանն այս տարի 8 շրջանավարտ է ունեցել

Սփյուռքի հնագույն կրթօջախներից մեկը՝ պատմական հարուստ անցյալ ունեցող Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը, այսօր նույն եռանդով շարունակում է իր առաքելությունը: Ճեմարանը գտնվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո՝ վայելելով Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր ուշադրությունը:

Այժմ Հայոց մարդասիրական ճեմարանում ուսանում են հայորդիներ՝ Հնդկաստանից, Հայաստանից, Պարսկաստանից եւ Իրաքից, որոնք գալիս են գիտելիքներ ձեռք բերելու եւ հայեցի դաստիարակություն ստանալու համար:

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, Մարդասիրական ճեմարանն ունեցավ իր շրջանավարտների բարի հունձքը: Ավարտելով տասնամյա դասընթացը, ութ շրջանավարտներից վեցը՝ Հայաստանից եւ Պարսկաստանից, ընդունվեցին Կալկաթայի լավագույն դպրոցները՝ շարունակելու տասնմեկ եւ տասներկուերորդ դասարանները: Նրանցից չորսը՝ Երանուհի Առաքելյան, Անդրանիկ Գեւորգյան, Կարեն Մկրտչյան եւ Արմեն Մակարյան, այժմ սովորում են Կալկաթայի «La Martiniere», իսկ Գագիկ Չիլինգարյանը եւ Արեն Դավուդին՝ «The Assembly of God Church» վարժարաններում: Ավարտելով ճեմարանի տասնամյա դասընթացը, շրջանավարտներից երկուսը՝ Գոռ Գեւորգյանը եւ Էջմին Շահիջանին, վերադարձան՝ միանալու իրենց ընտանիքներին:

Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի հյուրընկալ դռները մշտապես բաց են հայ աշակերտների համար:

AZG NEW 7.QXD 7/14/2009 11:10 PM Page 1





ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

# Ուղեգրի հարցը կվճռվի Զագրեբում



ՖՈՏՈԼՈՒՐ

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ փուլի առաջին խաղում «Փյունիկը» հյուրընկալել էր Խորվաթիայի վերջին չորս տարիների անփոփոխ չեմպիոն Զագրեբի «Դինամոյին»: Առաջին իսկ րոպեներից պարզ դարձավ, որ հանձինս հյուրերի՝ փյունիկցիները գործ ունեն բավական ուժեղ մրցակցի հետ, որը տեմպային ֆուտբոլ է ցուցադրում եւ որի խաղացողներն աչքի են ընկնում ֆիզիկական լավ տվյալներով ու արագաշարժությամբ: Բայց ի պատիվ փյունիկցիների, նրանք կարողացան արժանի մրցակից դառնալ դինամոյականներին, իսկ երկրորդ խաղակեսում իրենց ակտիվ խաղով նույնիսկ գերազանցեցին մրցակցին:

Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին դինամոյականները, որոնք մեծ ուժերով գրոհներ էին կազմակերպում՝ փորձելով մրցակցության ելքը վճռել երեւանյան խաղում: Ի տարբերություն հյուրերի, «Փյունիկն» առջեւի գծում թողել էր միայն բրազիլացի Մարկոսին, որին գրոհների ժամանակ պետք է ակտիվորեն աջակցեին նրա խաղընկերները: Սակայն առաջին խաղակեսում «Փյունիկը» փոքր ուժերով էր գրոհում, ուստի չկարողացավ քիչ թե շատ սպառնալից պահեր ստեղծել մրցակցի դարպասին: Ճիշտ է, 12-րդ րոպեին «Փյունիկը» կարող էր բացել հաշիվը, երբ Մարկոսն անսպասելիորեն խլեց գնդակը եւ կարող էր մեն մենակ հայտնվել դարպասապահի դիմաց: Սակայն, չգիտես ինչու, նա շտապեց եւ թույլ հարվածեց, որը դարպասապահի համար վտանգ չէր ներկայացնում:

Հյուրերն էլ, թեեւ խաղային որոշ առավելությանը, գոլային իրական պահեր չկարողացան ստեղծել: Թերեւս հիշարժան էր 32-րդ րոպեին Միլան Բադելի հեռահար հարվածը, որը դարպասապահ Հովհաննիսյանն ակրոբատիկ ցատկով հետ մղեց:

Ընդմիջումից հետո փյունիկցիները զգալիորեն ակտիվացան եւ իրենց հատուկ հարձակողական խաղը ցուցադրեցին: Դա ստիպեց հյուրերին ավելի մեծ ուժեր կենտրոնացնել թիկունքում եւ մտածել սեփական դարպասի պաշտպանության մասին: 56-րդ րոպեին անհատական վարպետությամբ փայլեց Մարկոսը, որը խաբս տալով մի քանի պաշտպանների, մտավ տուգանային հրապարակ եւ փորձեց խոցել դարպասը: Սակայն հաջող խաղաց դարպասապահը: Հիշարժան էր նաեւ «Փյունիկի» ավագ Սարգիս Հովսեփյանի անհատական անցումը, սակայն, ցավոք, նրա հարվածը չստացվեց: «Փյունիկի» ավագը երկրորդ խաղակեսում անընդհատ աջ եզրով միանում էր թիմակիցների գրոհներին՝ փորձելով օգնել նրանց: Հյուրերը թեեւ ավելի շատ ուշադրությունը կենտրոնացրել էին պաշտպանության վրա, սակայն վտանգավոր հակագրոհներ էին կազմակերպում: Մի քանի անգամ ստիպված էր իր վարպետությունը ցուցադրել դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը: «Փյունիկի» գրոհների սրությունը մի փոքր թուլացավ, երբ դաշտից հեռացավ Մարկոսը:

Սուր մրցակցությունում անցած մրցախաղում այդպես էլ դարպասները մնացին անառիկ: Ինչ խոսք, պատասխան խաղում, որը կկայանա հուլիսի 21-ին Զագրեբում, «Փյունիկին» դժվարին պայքար է սպասվում ուղեգրի համար: Բայց ամեն դեպքում, «Փյունիկի» ցուցադրած խաղն արժանի է դրվատանքի: Հայաստանի չեմպիոնն աչքի ընկավ իր կամային հատկանիշներով եւ խաղային շատ դրվագներում ոչնչով չզիջեց ուժեղ մրցակցին: Հուսանք, որ պատասխան խաղը բարեհաջող ավարտ կունենա մեր չեմպիոնի համար:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

# «Կոնվերս» բանկի ջանքերով «Հատիսը» վերածնվում է




ՖՈՏՈԼՈՒՐ

**Մարզասերներից շատերը, անշուշտ, հիշում են ԽՍՀՄ-ի առաջնությունների մասնակից Աբովյանի «Հատիս» կանանց թիմի հաջող մրցելույթները: 1988-ին թիմը նվաճել էր ԽՍՀՄ գավաթը: Ցավոք, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո «Հատիսը» կազմալուծվեց: Եվ ահա տարիներ անց, «Կոնվերս» բանկի հովանավորության շնորհիվ «Հատիսը» վերածնվում է: Ստեղծվել են կանանց եւ տղամարդկանց բասկետբոլի թիմեր, որոնք այս տարվանից մասնակցում են Հայաստանի առաջնությանը:**

**Երեկ կայացած մամուլի ասուլիսում «Կոնվերս» բանկի մասնաճյուղերի եւ բանկային ծառայությունների վարչության պետ Սուրեն Զոհրաբյանը նշեց, որ այլ ծրագրերի իրականացման հետ այս տարի որոշել են հովանավորել նորաստեղծ «Հատիսին»: Ընդ որում, բացի վարպետների թիմերից, որոնց խաղացողներն աշխատավարձ են ստանում, նաեւ ուշադրություն է դարձվելու մանկապատանեկան բասկետբոլի զարգացմանը:**

**Բասկետբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հրաչյա Ռոստոմյանը շնորհակալություն հայտնեց «Կոնվերս» բանկի ղեկավարությանը հիանալի նախաձեռնության համար ու խոստացավ գույքով աջակցել: Նա տեղեկացրեց, որ օրերս Վրաստանում Հայաստանի մինչեւ 16 տարեկանների պատանեկան հավաքականը հաջող մրցելույթներ է ունեցել՝ հաղթելով Ադրբեջանի եւ Թբիլիսիի հավաքականներին: Ընդ որում, մեր հավաքականում հանդես են եկել միայն հայ բասկետբոլիստներ:**

**«Հատիս» ակումբի գործադիր տնօրեն Արթուր Նազարյանը նշեց, որ երկարատեւ ընդմիջումից հետո Հայաստանի ներկայացուցիչը մասնակցելու է եվրոգավաթների խաղարկությանը: Միջազգային մրցասպարեզ դուրս կգա «Հատիսի» կանանց թիմը, որը կհամալրվի ինչպես տեղի թիմերի, այնպես էլ արտերկրում հանդես եկող բասկետբոլիստուհիներով:**

**Հուլիսի 21-ին Մյունխենում կայանալիք վիճակահանությամբ հայտնի կդառնա «Հատիսի» մրցակիցը: Եթե հաջողվի հաղթահարել նախնական փուլը, ապա «Հատիսը» կընդգրկվի խմբային մրցաշարում, ինչը հնարավորություն կտա անցկացնելու նվազագույնը եւս 6 հանդիպում, որից 3-ը՝ Երեւանում: Նշենք, որ նախորդ տարիներին Հայաստանի ակումբները ֆինանսական միջոցների սղության պատճառով հրաժարվել են եվրոգավաթների մասնակցությունից: Ակումբի ղեկավարությունը «Կոնվերս» բանկի հետ համատեղ ծրագրել է թիմի մարզաբազայի ստեղծումը:**

# Արտուրո Գատիի սպանության մեջ մեղադրվում է կինը

Քաշային երկու կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, անվանի բռնցքամարտիկ Արտուրո Գատիի դիակը հայտնաբերվել է Բրազիլիայի Պորտո դե Գալինասի առանձնատներից մեկում: 37-ամյա բռնցքամարտիկը կնոջ եւ 10 ամսական երեխայի հետ այնտեղ իր մեղրամիսն էր անցկացնում:

Ըստ Գատիի կնոջ տված ցուցմունքի, նախորդ օրն իրենք սրճարանում վիճել են, իսկ երբ տուն են վերադարձել, ամուսինը լավ հարբած է եղել: Առավոտյան ժամը 6-ին կինը զարթնել է երեխային կերակրելու համար, իսկ երբ 3 ժամ հետո փորձել է արթնացնել ամուսնուն, հայտնաբերել է, որ նա մահացել է:

Ոստիկանության անցկացրած հետաքննությամբ պարզվել է, որ Գատիին խեղդել են: Նրա պարանոցին բռնության հետքեր են հայտնաբերվել: Գատին խեղդամահ էր եղել կանացի պայուսակի ամրագոտիով, որի վրա



մնացել էին արյան հետքերը: Ոստիկանությունը սպանության մեջ կասկածում է առաջին հերթին բռնցքամարտիկի կնոջը՝ Ամանդա Ռոդրիգեսին, որը կալանավորվել է:

Ըստ տարածված լուրերի, ամուսինների հարաբերությունները լարված էին եւ հնարավոր էր, որ նրանք բաժանվեին: Արտուրո Գատին ծնվել էր Իտալիայում, բնակվում էր ԱՄՆ-ում: Նա Բրազիլիա էր մեկնել, քանի որ նրա կինը բրազիլուհի էր: Գատին 3 ամիս առաջ էր ազատվել բանտից: Նա բանտարկության էր դատապարտվել դատարան չներկայանալու համար: Գատին մեղադրվում էր իր նախկին ընկերուհու վրա հարձակում գործելու համար, սակայն դատական նիստին չէր ներկայացել: Նրան ձերբակալել էին սթրիփթիզ ակումբում ծննդյան օրը նշելիս: Ճիշտ է, բանտում Գատին մեկ շաբաթ էլ չմնաց:

Պրոֆեսիոնալ ռինգում Գատին 49 մենամարտ էր անցկացրել, որից 40-ում հաղթել էր: 1995-98-ին նա կրում էր առաջին կիսաթեթեւ քաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, իսկ 2004-05-ին նրան էր պատկանում առաջին կիսամիջին քաշային կարգում WBC-ի վարկածով չեմպիոնական գոտին:

# Մարկ Ուեբերի առաջին հաջողությունը

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն անցկացվեց Գերմանիայում: Ինչպես որակավորման մրցումներում, այնպես էլ Գրան պրիի խաղարկությունում լավագույնը «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Մարկ Ուեբերն էր: Նա իր կարիերայում առաջին անգամ դարձավ Գրան պրիի հաղթող:

2-րդ տեղը գրավեց «Ռեդ Բուլի» մեկ այլ մրցարշավորդ՝ Սեբաստիան Ֆետելը: Լավագույն եռյակը եզրափակեց «Ֆերարիի» մրցարշավորդ Ֆելիպե Մասսան: Աշխարհի առաջնության առաջատար Ջենսոն Բատոնը ավտոմրցավազքն ավարտեց 5-րդ տեղում: Ընդհանուր հաշվարկով Բատոնը 68 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: 2-րդ տեղում 47 միավորով Սեբաստիան Ֆետելն է «Ռեդ Բուլից»: Լավագույն եռյակը եզրափակում է «Ռեդ Բուլի» մեկ այլ մարզիկ՝ Մարկ Ուեբերը:

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում 112 միավորով առջեւում է «Բրաունը»: «Ռեդ Բուլն» ունի 92,5 միավոր, «Տոյոտան»՝ 34,5:

# Վազք բարձրակրունկ կոշիկներով

Բեռլինում անցկացվեցին բարձրակրունկ կոշիկներով 100 մ վազքի ավանդական մրցումները, որոնց մասնակցում են միայն կանայք: Մրցակարգի համաձայն, կրունկի լայնությունը չպետք է գերազանցեր 1,5 սմ-ը: Մրցումներում հաղթող ճանաչվեց գերմանական բուհերից մեկի 18-ամյա ուսանողուհի Յուլիա Պլեխերը: Նա մրցատարածությունը հաղթահարեց 14,2 վրկ-ում, ինչը 0,5 վրկ-ով գերազանցում է 2007-ին սահմանված մրցումների ռեկորդը: Հաղթողը որպես պարգեւ ստացավ 10 հազար եվրո, որով առաջին հերթին պատրաստվում է համակարգիչ գնել:

# Առաջատար դիրքերում հայ շախմատիստներն են

**Մարտունիում մեկնարկել է «Սեւանա լիճ» անվանումը կրող շախմատի միջազգային մրցաշարը, որի 10 մասնակիցներից հինգը ներկայացնում են Հայաստանը, մյուսներն արտերկրից են: Անցկացված 4 տուրից հետո առաջատար դիրքերում հայ շախմատիստներն են: Աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են միջազգային վարպետ Լեւոն Բաբուջյանն ու գրոսմայստեր Ավետիք Գրիգորյանը: Նրանց կես միավոր է զիջում Հայաստանի չեմպիոն Արման Փաշիկյանը: 2-ական միավորով հաջորդ տեղերում են Սամվել Տեր-Սահակյանը, հունգարացի Ֆերենց Բերկեշը եւ չինացի Զաո Լին: 1,5-ական միավոր ունեն Տիգրան Քոթանջյանը, բելառուսցի Սերգեյ Ժիգալկոն եւ ռուսաստանցի Իգոր Լիսիջը: Աղյուսակը եզրափակում է ղազախստանցի Ռինատ Ջումաբաեւը, որի օգտին գրանցված է 1 միավոր:**

**Բաբուջյանը Բերկեշի եւ Գրիգորյանի հետ ոչ-ոքիներով մեկնարկեց, այնուհետեւ հաղթեց Լիին եւ Լիսիջին: Գրիգորյանն էլ միավորները կիսելով Տեր-Սահակյանի եւ Բաբուջյանի հետ, պարտության մատնեց Քոթանջյանին ու Ջումաբաեւին:**

# Մովսիսյանի անդրանիկ հաղթանակը

**Իսպանական Սան Սեբաստիան քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում Սերգեյ Մովսիսյանը վերջապես անդրանիկ հաղթանակը տոնեց: Նա սեւերով պարտության մատնեց հետնապահին՝ աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովին: Այդ հաղթանակի շնորհիվ Մովսիսյանը վաստակեց 3 միավոր եւ Վաշյե-Լագրավի, Կասիմջանովի ու Վալեխոյի հետ բաժանում է 4-7-րդ տեղերը: Առաջատարը ճապոնացի Հիկարու Նակամուրան է: Նա ոչ-ոքի խաղաց Ռուսլան Պոնոմարյովի հետ եւ 5 միավոր վաստակեց: Պոնոմարյովն ու Սվիդլերը ունեն 4-ական միավոր: Վերջինս ոչ-ոքի ավարտեց պարտիան Ֆրանցիսկո Վալեխոյի հետ: Մաքսիմ Վաշյե-Լագրավը հաղթեց Պաբլո Սան Սեգունդոյին, իսկ Կասիմջանովը պարտության մատնեց Խուլիո Գրանդային: 7-րդ տուրում Մովսիսյանը սպիտակներով կխաղա Կասիմջանովի հետ:**

# Գազաեւն Ուկրաինայում առաջին մրցանակը շահեց

**Վալերի Գազաեւը Կիեւի «Դինամոյում» մարզչական գործունեությունը հաղթանակով սկսեց: Նրա գլխավորությամբ դինամոյականները նոր մրցաշրջանում առաջին տիտղոսը նվաճեցին՝ դառնալով Ուկրաինայի Սուպերգավաթակիր: Պատվավոր մրցանակի համար պայքարում «Դինամոն» հետխաղյա 11 մ հարվածներով հաղթեց Պոլտավայի «Վորսկլային» (4-2): Հանդիպման հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասները մնացին անառիկ: Կիեւի «Դինամոն» 4-րդ անգամ նվաճեց Ուկրաինայի Սուպերգավաթը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Սիրելի հայրենակիցներ

Այսօր կրկին հայությունը հայտնվել է պատմական կարեւոր փորձության շեմին: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների վերջին հայտարարությունը ոտնահարում է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ անտեսում ԼՂՀ գոյության փաստը: Այն Արցախի հիմնախնդրի հանգուցալուծումը կանխորոշում է ի վնաս Հայաստանի եւ հայության:

**Հայրենակիցնե՛ր**

Մենք դեմ ենք մեր երկրի եւ ողջ հայության կենսական շահերը վտանգող որեւէ զիջման:

Բողոքի ցույցին մեր մասնակցությունը բերելով՝ վերահաստատենք ազգային-պետական հիմնահարցերում հայության միասնականությունն ու վճռականությունը:

Ցույցը տեղի կունենա ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց, **հուլիսի 16-ին, ժամը 16:00-ին:**

Նույն օրը, նույն ժամին աշխարհի բազմաթիվ երկրներում նույնպես տեղի են ունենալու բողոքի ցույցեր:

Միանանք հայության համընդհանուր ընդվզումին:

*ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ*

# «Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է

**«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ «Կաթնաղբյուր 5-րդ» ջրատարի վթարավերականգնողական աշխատանքների հետ կապված՝ հուլիսի 14-ին, ժամը 12.00-ից մինչեւ հուլիսի 15-ի ժամը 12.00-ն կջրազրկվեն Նոր-Նորք համայնքի 1, 2, 3, 6, 7, 9-րդ զանգվածները, Էրեբունի համայնքի Սարի-թաղի փողոցները, Վարդաշենի հանրակացարանները, Մուշականի 7-10 փողոցները, Նորք-Մարաշ համայնքը, Ավան համայնքը ամբողջությամբ, Քանաքեռ-Զեյթուն համայնքի Բաբայան, Ուլնեցի, Տիգրանյան, Վարշավյան, Դ. Անհաղթ, Ներսիսյան, Ահարոնյան, Պ. Սեւակ, Դրո, Հասրաթյան, Ռուբինյանց, Ռայնիս, Գոգոլ, Նոր Աշխարհյան, Ռադիշչեւ, Շեւռոյան, Գելցեն, Լեպսիուսի փողոցները, Ազատություն փողոցը իր նրբանցքներով եւ հարակից տարածքները:**

**Իսկ «Կաթնաղբյուր 4-րդ» ջրատարի վրա շինարարական աշխատանքների հետ կապված՝ ս.թ. հուլիսի 16-ին, ժամը 10.00-ից մինչեւ հուլիսի 17-ի ժամը 10.00-ն կջրազրկվեն Նոր-Նորք համայնքի 4, 5, 8-րդ զանգվածները, Ջրվեժի՝ Ա, Բ, Մայակ, Բանավան թաղամասերը, Բագրեւանդ փողոցը եւ հարակից տարածքները:**

**Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:**

***«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ» ՓԲԸ***

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր*

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար*

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երեւանի թիվ 114 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (պատվիրատու) «Հ.114-ԳՀԱՇՁԲ-2-09» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Երեւանի թիվ 114 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի** համար ապրանքների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ Բանկ» գլխ. գրասենյակ 16048100047100 հաշվարկային հաշվին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Հանրապետության 73:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 11-ը:

*Տնօրեն՝ Ռ. ԿՈՍՏԱՆՅԱՆ*

www.
azg.am

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Սույն հայտարարությունը տպագրվում է 2007 թ. ապրիլի 24-ին՝ Տնտեսական դատարանի կողմից ընդունված որոշման համաձայն:

## Հայտարարություն

Արմենտել ՓԲԸ-ն հայտնում է, որ 10.03.2003թ. մինչեւ 11.06.2004 ընկած ժամանակահատվածում Xter.net ապրանքային նշանի տակ գործող Էքսոլթ ՍՊ ընկերության հեռազանգով մատուցվող ինտերնետային ծառայություններից օգտվող հաճախորդների կապ հաստատելու հարցում դժվարությունները առաջացել էին ոչ թե Էքսոլթ ՍՊ ընկերության մեղքով, այլ Արմենտել ՓԲ ընկերության կողմից ապօրինի կարգով կապուղիներ չտրամադրելու եւ/կամ կապուղիները անջատելու պատճառով:

Արմենտել ՓԲ ընկերությունը հայցում է անհարմարություններ կրած բաժանորդների եւ Էքսոլթ ՍՊ ընկերության ներողամտությունը եւ պարտավորվում է հետագայում թույլ չտալ նման խախտումներ:

United Nations Development Programme

### Vacancy Announcement - VA 015-09-HR

The United Nations Development Programme in Armenia invites applications from qualified and experienced candidates for the position of **Local Security Administrative Assistant.**

Please visit **http://www.undp.am/?pages=jobs** website to obtain full Terms of Reference, application procedures and requirements.

Applications can be submitted through http://oc.undp.am/?go=vacancies site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan Str. .

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. A complete application form should consist of a letter of motivation, full CV. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Application deadline:** 28 July 2009, 18:00

**Women candidates are encouraged to apply**

**UNDP / UN House is a non-smoking environment**

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ- VA 015-09-HR

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ **Անվտանգության համակարգում գործառնական (ադմինիստրատիվ) գծով օգնականի** թափուր տեղի համար:

Աշխատանքի ամբողջական նկարագրին, աշխատանքին դիմելու ընթացակարգին եւ պահանջներին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայք:

Դիմումները կարելի է հանձնել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետում (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** ինտերնետային կայքում: Դիմումները կարելի է ուղարկել նաեւ փոստով:

**Խնդրում ենք ձեր դիմումի մեջ հստակորեն նշել պաշտոնի անվանումը եւ թափուր տեղի հայտարարության համարը:**

Ամբողջական դիմումը պետք է ընդգրկի ուղեկցող նամակ, ինքնակենսագրություն (CV): Թերի դիմումները հաշվի չեն առնվի: Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը. 2009, հուլիսի 28, 18:00**

***Կանանց մասնակցությունը խրախուսվում է***

***ՄԱԿ/ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակում ծխելն արգելված է***

United Nations Development Programme

### Vacancy Announcement -25/09/SSA

The United Nations Development Programme in Armenia in the framework of Strengthening National Capacities for Disaster Preparedness and Risk Reduction Project invites applications from qualified and experienced national experts for the position of **Advisor for the Public Information Center of the Armenian Rescue Service.**

Please visit **http://www.undp.am/?pages=jobs** website to obtain full **Terms of Reference**, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan Str.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. A complete application form should consist of a letter of motivation, full CV. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Application deadline:** 20 July 2009, 18:00

***Only sort listed applicants will be contacted***

***Women candidates are encouraged to apply***

***UNDP / UN House is a non-smoking environment***

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-25/09/SSA

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը «Աղետներին պատրաստվածության եւ ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում հայտարարում է խորհրդատուի մրցույթ **Հայաստանի փրկարար ծառայության լրատվական կենտրոնի համար:**

Մանրամասն տեղեկություններին կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետից (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայքից: Դիմումը կարելի է հանձնել պահակակետում կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** կայքում: Դիմումները կարելի է ուղարկել նաեւ փոստով:

**Խնդրում ենք Ձեր դիմումի մեջ հստակորեն նշել թափուր պաշտոնի անունը եւ հայտարարության համարը:**

Ամբողջական դիմումը պետք է ընդգրկի ուղեկցող նամակ, ինքնակենսագրություն (CV): Թերի դիմումները հաշվի չեն առնվի: Հաջորդ փուլի համար կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. հուլիսի 20, ժամը 18:00

***Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները***

***Կանանց մասնակցությունը խրախուսվում է***

***ՄԱԿ/ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակում ծխելն արգելված է***

United Nations Development Programme

### Vacancy Announcement -26/09/SSA

The United Nations Development Programme in Armenia in the framework of Strengthening the Human Rights Capacity of the Human Rights Defenders Office project invites applications from qualified and experienced national experts for the **Task Force on research of labour rights (applicable for 4 experts): two legal experts, one sociologists, one psychologist.**

Please visit **http://www.undp.am/?pages=jobs** website to obtain full **Terms of Reference**, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan Str.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. A complete application form should consist of a letter of motivation, full CV. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Application deadline:** 23 July 2009, 18:00

***Only sort listed applicants will be contacted***

***Women candidates are encouraged to apply***

***UNDP / UN House is a non-smoking environment***

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-26/09/SSA

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի իրավունքի վերաբերյալ հետազոտություն իրականացնելու համար հայտարարում է փորձագետների մրցույթ՝ **երկու իրավաբան, մեկ հոգեբան եւ մեկ սոցիոլոգ:**

Մանրամասն տեղեկություններին կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետից (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայքից: Դիմումը կարելի է հանձնել պահակակետում կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** կայքում: Դիմումները կարելի է ուղարկել նաեւ փոստով:

**Խնդրում ենք Ձեր դիմումի մեջ հստակորեն նշել թափուր պաշտոնի անունը եւ հայտարարության համարը:**

Ամբողջական դիմումը պետք է ընդգրկի ուղեկցող նամակ, ինքնակենսագրություն (CV): Թերի դիմումները հաշվի չեն առնվի: Հաջորդ փուլի համար կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. հուլիսի 23, ժամը 18:00

***Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները***

***Կանանց մասնակցությունը խրախուսվում է***

***ՄԱԿ/ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակում ծխելն արգելված է***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28:

AZG NEW 4-1.QXD 7/14/2009 10:28 PM Page 1



## Հարցազրույց

# Ռամկավար-ազատական կուսակցությունը պետք է լինի հայաստանակենտրոն

***Այս օրերին շատ է խոսվում նորաստեղծ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության, ՌԱԿ առաջիկա միավորիչ համագումարի, Մայք Խարաբյանի ինքնահռչակ կենտրոնական վարչության կողմից Հակոբ Ավետիքյանին ՌԱԿ շարքերից հեռացնելու պատճառների եւ նույն վարչության հայաստանյան հայտնի խեղկատակի լափռոշությունների մասին: Այդ կապակցությամբ լրագրողները «Ազգի» գլխավոր խմբագրին անընդմեջ հարցեր են ուղղում ու բացատրություն պահանջում, ինչին որպես պատասխան վերջինս առաջարկում է ծանոթանալ ստորեւ «Իրավունք դե ֆակտո» թերթի 2009 թ. հուլիսի 10-ի համարից արտատպվող իր հարցազրույցին:***

**- Պարոն Ավետիքյան, մամուլում, մասնավորապես, մեր թերթում եղել է անդրադարձ նոր ստեղծվող Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության շուրջ սկսված խմորումներին: ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը մեղադրում է Ձեզ, որ օտարերկրյա քաղաքացի լինելով փորձում եք նոր ռամկավար կուսակցություն ստեղծել:**

- Սկսենք նրանից, որ ես քսան տարի ապրում եմ Հայաստանում, 1991-ի փետրվարի 16-ից քաղաքական օրաթերթ եմ հրատարակում եւ այդ թերթի բաժնետերերից մեկն եմ: Այսինքն ես 19 տարի քաղաքական կյանքի մեջ եմ: Այդ կապակցությամբ Հարութի արտահայտած մտքերն ուղղակի անհեթեթ են եւ խիստ ուշացած, առնվազն 19 տարով: Դեռեւս 1994 եւ 1996 թթ.-ին, նախ Վիգեն Խաչատրյանը եւ ապա Վարդան Պետրոսյանը հրապարակավ պահանջել էին ՀՀ առաջին նախագահից, որ ինձ արտաքսեր երկրից: Քաղաքական առումով ո՞ւր են հիմա այդ մարդիկ. դարձել են փոշի, եւ առանց իմ օգնության: Հարութին սպասում է միեւնույն ճակատագիրը, դարձյալ առանց իմ օգնության: Ի դեպ, Հարութը ինձ մոտ աշխատել է 6-7 տարի առաջ, հիմա նո՞ր է գլխի ընկնում, որ ես օտար երկրի քաղաքացի եմ: Բացի այդ, կարելի է դիմել կուսակցությունների պետական գրանցումն իրականացնող համապատասխան պետական կառույցին եւ տեղեկանալ, թե արդյոք իմ անունով, ստորագրությամբ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն հիմնադրելու հայտ ներկայացվա՞ծ է, թե՞ ոչ: Ձեզ ավելորդ նեղություն չպատճառելու համար կարող եմ ասել, որ իմ անունը չկա նոր կուսակցության հիմնադիրների ցանկում:

**- Սակայն Դուք այսպես թե այնպես, ողջունո՞ւմ եք այդ ձեռնարկը:**

- Իհարկե, ես քաջալերում եմ այդ կուսակցության ստեղծումը եւ դրա համար որեւէ մեկից, մանավանդ Հարութից, թույլտվություն չպիտի հարցնեմ:

**- Այնուհանդերձ, սա Հայաստանում նոր ՌԱԿ ստեղծելու փորձ չէ՞:**

- Իրավաբանական իմաստով սա նոր կառույց է, նոր կուսակցություն, որի գաղափարախոսությունը, անշուշտ, բխում է 1885-ին հիմնադրված առաջին հայ քաղաքական կուսակցության՝ արմենականների գաղափարախոսությունից, որի հիմքի վրա էլ հետագա տարիներին ստեղծվել են տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ սփյուռքում տասնամյակներ շարունակ գործող Ռամկավար ազատական կուսակցությունը: Այնպես որ, այս գործընթացն իրավական առումով ՀՌԱԿ-ի հետ կապ չունի, մանավանդ դեռ հարց է՝ արդյո՞ք ՀՌԱԿ, որպես այդպիսին, գոյություն ունի: Վերջին երեք տարիներին Հայաստանում երեք խոշոր ընտրություն է եղել՝ Ազգային ժողովի, հանրապետության նախագահի եւ Երեւանի քաղաքային ավագանու, որը նույնպես կարելի է գրեթե համապետական ընտրություն համարել: Այդ ընտրություններին ՀՌԱԿ-ը որեւէ ձեւով չի մասնակցել: Այնինչ Հարութը հայտարարում է, որ 20 հազարից ավել անդամ ունի, որով կարելի էր քաղաքական կյանքում զգալի դերակատարում ունենալ: Այսինքն թղթի վրա այդպիսի կուսակցություն միգուցե գոյություն ունի, բայց իրականում դա դեռ մեծ հարցական է:

**- Բայց Դուք ինքներդ ՀՌԱԿ-ի հիմնադիրներից եք եղել:**

- Այո, 1990-ից մինչեւ 1994-ը ՀՌԱԿ վարչության անդամ էի: Դրանից հետո մեր թերթում հրաժարականի հայտարարություն տալով դուրս եմ եկել ՀՌԱԿ-ից, որովհետեւ ճնշումներ կային կուսակցության նկատմամբ եւ ես այլ պետության քաղաքացի հանդիսանալով, դուրս եկա, որպեսզի կուսակցությունը հարվածի տակ չդնեմ: Սակայն ես մնում եմ սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության անդամ՝ սկսած 1977-ից:

**- Ձեր ընդդիմախոս Հարություն Առաքելյանը նաեւ պնդում է, որ ՀՌԱԿ-ի «Ազգ» թերթը վերածել եք Ձեր սեփականության:**

- Նախ՝ Հարութին ես ընդդիմախոս չեմ համարում, որովհետեւ այդ մարդը չունի այդ արժանիքը: Որեւէ հարթության վրա կարելի է բանավիճել միայն խելացի մարդու հետ: Իմ այս լուսաբանումները ուղղված են հասարակական կարծիքին: Ինչ վերաբերում է «Ազգին», ապա ինչպես Հայաստանում գոյություն ունեցող բոլոր թերթերը, մեր օրաթերթն էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որը Հայաստանում տպագրվելու ողջ ընթացքում երբեւէ չի եղել ՀՌԱԿ-ի պաշտոնաթերթը: Հին լրագրողները լավ են հիշում 1996-ին «Ազգը» կուսակցական օրգանի վերածելու տխրահռչակ փորձը, որը ձախողվեց դատարանի որոշմամբ, հատկապես Հայաստանի լրագրողական ընտանիքի ճնշման ներքո: «Ազգը» ռամկավար-ազատական գաղափարախոսությամբ օրաթերթ է, բայց ոչ կուսակցության պաշտոնաթերթ: Այսպիսով, ես «Ազգ օրաթերթ» ՍՊԸ հիմնադիրն եմ, տնօրենը եւ թերթի բաժնետերերից մեկը: Թերթն այդ կարգավիճակով գրանցվել է պաշտոնապես, այստեղ քննարկելու հարց չկա: Հարութը եթե թերթ պահելու կարողություն ունի, թող հիմնի իրը, ձեռքը բռնող չկա:

**- Լավ, ամեն դեպքում ինչի՞ հետեւանք է այս խմորումը: Փաստ է, որ այն կա հայաստանյան ռամկավարների մեջ եւ այսպես թե այնպես առնչվում է ՀՌԱԿ-ին:**

- Խմորումն արդյունք է այն իրողության, որ Հարութը զբաղված է կուսակցության ղեկավար լինելու միջոցով իր ապրուստը հոգալով, հացի խնդիր է: Դրա համար, անշուշտ, ավելի պարկեշտ միջոցներ կային, բայց ինքը նախընտրում է կուսակցության ղեկավար լինել եւ միաժամանակ այդ քողի տակ պատսպարվել: Իսկ պատսպարվելու պահանջ, թերեւս, ունի, որովհետեւ հուլիսի 8-ին, ժամը 11-ին Կենտրոն-Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ առաջին նիստը, որտեղ «Նաիրիտ» գործարանը հայց է ներկայացրել ընդդեմ Հարություն Առաքելյանի: Որովհետեւ 2003-ին նա հիմնել է մի ընկերություն, մի շարք գործարքներ կատարել «Նաիրիտ» գործարանի հետ, կուտակել է 6,5 մլն դրամից ավելի պարտք եւ քանի որ փողը չի վերադարձրել, «Նաիրիտ» գործարանը դիմել է դատարան: Մի կողմ թողնենք, թե ինչքանով է այսպիսի մարդն իր կերպարով համապատասխանում կուսակցության ղեկավար լինելուն, բայց այս ամենը շատ նման է կուսակցությունը իր համար օֆշորային գոտու վերածելուն, որովհետեւ դատարանը պարզել է, որ Հարություն Առաքելյանն այսօր որեւէ կապ չունի այն իրավաբանական հասցեի հետ, որտեղ գրանցված է իր ընկերությունը: Որքանով տեղյակ եմ դատական նիստից, հանձնարարված է համապատասխան մարմիններին օրենքով սահմանված կարգով հետապնդում իրականացնել ու պարզել այս հարցը: Դրա համար էլ ես խուսափում եմ այս մարդու հետ որեւէ թեմայով բանավիճելուց, քանզի նա արժանի չէ: Չեմ էլ պահանջում, որ նա պատասխան տա, թե ինչպես եւ ինչու «ձեռքից բաց թողեց» ՀՌԱԿ կենտրոնական գրասենյակի ընդարձակ տարածքը Կորյունի 19 ա հասցեում:

**- Սակայն ՀՌԱԿ-ն ունի անցած պատմություն: Դուք ՌԱԿ-ի անդամ եք 1977-ից, կուսակցությունը Հայաստանում վերականգնողներից մեկն եք եղել: Հետո շատ ջրեր հոսեցին եւ ահա ի հայտ է եկել Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն ստեղծելու նախաձեռնությունը: Այդ կուսակցությունը որեւէ առնչություն ունենալո՞ւ է սփյուռքում գործող ՌԱԿ-ի հետ:**

- Անշուշտ, ունի եւ ունենալու է: Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր համագումարի հայտարարության մեջ նշված է, որ այս աշնանը սփյուռքի Ռամկավար ազատական կուսակցության հետ պետք է կազմակերպվի միավորիչ համագումար կամ, ինչպես մենք ենք ասում, պատգամավորական ժողով: Որովհետեւ, դժբախտաբար, սփյուռքում Ռամկավար ազատական կուսակցությունը պառակտված վիճակում է: Կուսակցության ԱՄՆ-ի արեւելյան շրջանի, Կանադայի, Լոնդոնի եւ ծանրակշիռ ձայն ունեցող Լիբանանի շրջանակները չեն ընդունում ՌԱԿ-ի վերջին պատգամավորական ժողովի արդյունքում ձեւավորված նոր վարչության լեգիտիմությունը: Մինչդեռ միայն Բեյրութում մենք 11 ակումբ ունենք, դպրոցներ, մշակութային միություն, խորհրդարանում պատգամավոր, հսկայական կենտրոն, ուր տպագրվում է «Զարթոնք» թերթը: ԱՄՆ-ի եւ Կանադայի շրջանակներն ունեն իրենց լրատվամիջոցները եւ լոբբինգային հիմնական գործունեությունն էլ Հայաստանի օգտին այս շրջանակների կողմից է տարվում:

**- Ինչո՞ւ է ստեղծվել այդպիսի վիճակ:**

- Որովհետեւ բոլոր շրջանակները գրեթե առանց բացառության պահանջում էին, որպեսզի Ռամկավար ազատական կուսակցության պատգամավորական ժողովը գումարվի Հայաստանում: Դրան դեմ էին մի փոքր խումբ մարդիկ, ովքեր Հորդանանի մայրաքաղաք Ամմանում իրենց ժողովը գումարեցին եւ ՌԱԿ ատենապետ վերընտրեցին Մայք Խարապյանին: Հիմա Արմենական Ռամկավար ազատական կուսակցությունը մտադիր է նոր պատգամավորական ժողով գումարել Հայաստանում, որը լինելու է միավորիչ համագումար:

**- Հիմա, փաստորեն, երկու ՌԱԿ վարչություն եւ երկու ատենապե՞տ գոյություն ունի սփյուռքում:**

- Ո՛չ, նշածս փոքրաթիվ խմբի կողմից ընտրված Մայք Խարապյանն է հանդես գալիս որպես ատենապետ, որի լեգիտիմությունը չեն ընդունում ԱՄՆ-ի, Լիբանանի, Լոնդոնի, Փարիզի, Կանադայի մեր շրջանակները: Այս տարվա հունվարին նրան հրավիրեցինք Հայաստան, ես էլ եմ հանդիպել հետը եւ փորձել եմ բացատրել իրական վիճակը, որ անհրաժեշտ է նոր, միավորիչ համագումար անցկացնել, Երեւանում: Նա խոստացավ, որ իր ընկերների հետ կքննարկի այդ առաջարկը, բայց, թերեւս, ունի մտավախություն, որ այդ պարագայում ինքը չի վերընտրվի ատենապետ, քանզի Ռամկավար ազատական կուսակցության մեջ իրենից շատ ավելի ծանրակշիռ անուն, վաստակ ու գործունեություն ունեցող գործիչներ կան բոլոր շրջանակներում: Թեպետ ես իրեն ասել եմ, որ կարեւոր չէ ով կընտրվի, այլ որ ՌԱԿ վարչությունն ու ատենապետը լինեն բոլոր շրջանակների համախոհությամբ ընտրված եւ կուսակցությունը կարողանա նորմալ կենսագործել: Որովհետեւ ՌԱԿ-ն առաջին եւ իրականում միակ ազատական կուսակցությունն է հայ իրականության մեջ եւ ափսոս է նման ավանդույթներ ու ցանցային կառույց ունեցող կազմակերպության անգործունեությունը::

**- Ձեր նախաձեռնությունը շատ է նմանվում դաշնակցության ձեռնարկած քայլին եւ կուսակցության բյուրոյի գրասենյակն արտասահմանից տեղափոխվեց Երեւան: Նպատակ ունեք ՌԱԿ-ը դարձնել հայաստանակենտրո՞ն:**

- Այո, եւ դա միակ ճիշտ ճանապարհն է: Մենք ՀՅԴ-ից ավելի վաղ, դեռ 1990-ի Մոնրեալում կայացած պատգամավորական ժողովում ենք ընդունել այդպիսի որոշում: Բայց ինչինչ պատճառներով, նաեւ Հայաստանի այն ժամանակվա անկատար օրենսդրական դաշտը նկատի ունենալով, դա հետաձգվեց: Հիմա փորձում ենք այդ խնդիրը լուծել եւ դրան նպաստում է նաեւ պետությունը սփյուռքին բացվելու իր նոր քաղաքականությամբ, նաեւ երկքաղաքացիության մասին օրենքով:

**- Ի դեպ, Հարություն Առաքելյանն այդ կապակցությամբ էլ նշել էր, թե հանրապետության վարչապետն է հովանավորում Ձեզ այդ հարցում:**

- Հայաստանում բոլորն էլ գիտեն, որ երկրի գլխավոր դեմքը հանրապետության նախագահն է: Ընդունենք, թե իշխանությունն օժանդակում է մեզ այդ հարցում, բայց ի՞նչ վատ բան կա, եթե պետությունը նպաստում է, որ սփյուռքում գործող ավանդական կուսակցությունը, որն ինքնին ազգային արժեք է, վերամիավորվի, դառնա հայաստանակենտրոն: Այլ հարց է, թե ինչ ձեւով պետք է ղեկավարման խնդիրը լուծվի: Բազմաթիվ տարբերակներ կան, որոնք մենք կքննարկենք աշնանը կայանալիք միավորիչ համագումարում ու որոշում կընդունենք:

**- Սակայն սփյուռքյան ՌԱԿ-ի շրջանակներն իսկապե՞ս ցանկանում են դա:**

- Անկասկած, դա հենց սփյուռքյան շրջանակների ցանկությունն է: Ես վերջին շրջանում՝ այս տարվա գարնանը, հինգ գաղթօջախ եմ այցելել, հանդիպումներ անցկացրել ՌԱԿ-ի մեր շրջանակների հետ եւ բոլորի ցանկությունն այն է, որ կուսակցությունը դառնա հայաստանակենտրոն: Որովհետեւ սփյուռքում էլ բավականին բարդ իրավիճակ է: Տարբեր երկրներում ապրող հայությունը հաճախ դժվար կացության մեջ է հայտնվում, երբ այդ երկրների քաղաքականությունը դառնում է հակադիր: Օրինակ, Սիրիան ու Լիբանանը որոշ պրոբլեմներ ունեն այսօր, երկու երկրներում էլ ՌԱԿ-ն ունի իր կառույցները: Եթե կենտրոնը լինի Հայաստանում, ավելի հեշտությամբ կկարողանա համակարգել նման խնդիրները:

**- Որքան հասկացա, Մայք Խարապյանի կողմնակիցները, իբրեւ հայաստանյան ռամկավարների միակ կառույց ճանաչում են ՀՌԱԿ-ին՝ ի դեմս Հարություն Առաքելյանի:**

- Թերեւս, հնարավոր է, որ իրար ձեռք են լվանում: Բայց երբ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը կգրանցվի եւ կնախաձեռնվի միավորիչ համագումար, Մայք Խարապյանին եւ իր կողմնակիցներին էլ հրավեր կուղարկվի՝ պատգամավորական ժողովին մասնակցելու: Եթե կհամաձայնեն, մենք միայն կողջունենք: Ցանկացած դեպքում համագումարը նախատեսել ենք անցկացնել աշնանը՝ սեպտեմբերին:

**- Փաստորեն ստացվում է, որ ռամկավարական շարժումը Հայաստանում չկայացավ: 1990-ին ՌԱԿ-ը վերադարձավ հայրենիք, հաջորդ տարի ստեղծվեց ՀՌԱԿ-ը, հիմա նորից փորձում եք նոր բան ստեղծել:**

- Ես այսպես կմեկնաբանեի, որ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն այսօր փորձում է հավաքել ՀՌԱԿ-ի բեկորները: Կուսակցության նախաձեռնող խումբը ղեկավարում է Արմեն Մանվելյանը, որը Հայաստանում մեր առաջին կուսակցականներից է, դեռեւս երբ ՌԱԿ-ը նոր էր վերահաստատվում հայրենիքում նա «Արմենական» ակումբի ատենապետ ընտրվեց, իսկ դա մեր կուսակցական առաջին օղակներից մեկն էր հայրենիքում՝ ՌԱԿ-ի գործունեությունը վերսկսելուց հետո: Նա հիմնադիրներից է ՀՌԱԿ-ի՝ վերջինիս գրանցման պահից: Այսինքն Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն այսօր հիմնադրող մարդիկ կանգնած են եղել Հայաստանում ռամկավարական շարժման վերականգնման ակունքներում եւ մինչեւ 2003-ը եղել են ՀՌԱԿ-ի շարքերում: Ընդհանրապես բոլոր նրանք, ովքեր ՀՌԱԿ-ից դուրս գալուց հետո այլ կուսակցության չեն անդամակցել, կարող են դիմում ներկայացնել ու անդամագրվել Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությանը:

**- Նոր կուսակցություն ստեղծելու փոխարեն ավելի ճիշտ չէ՞ր լինի ՀՌԱԿ-ի պատգամավորական ժողով հրավիրել եւ ատենապետի պաշտոնից հեռացնել Հարություն Առաքելյանին, եթե համարում եք, որ նա վատ է կառավարում կուսակցությունը:**

- Ոչ ոք չի ցանկանում այդ մարդու հետ այլեւս գործ ունենալ: 2003-ից ատենապետ դառնալով նա իր բոլոր հնարավոր ընդդիմախոսներին տարբեր պատճառներով ուղղակի հեռացրել է կուսացությունից, խախտելով կուսակցության կանոնադրությունը: Ըստ որում, կանոնադրության կոպիտ խախտմանը այն ժամանակ ուշադրություն չդարձրեց կուսակցությունը գրանցող մարմինը: Երկու ուրիշների հետ համաատենապետ դառնալուց հետո (տրիումվիրատ՝ որի մյուս երկու անդամներին Հարութը խարդավանքով չեզոքացրեց ավելի ուշ) նա առաջին իսկ օրը կուսակցությունից հեռացրեց հինգ հոգու, այդ թվում՝ ՀՌԱԿ հիմնադիր ատենապետ Ռուբեն Միրզախանյանին, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն Լավրենտի Բարսեղյանին: Հայ դասի համար պայքարող կուսակցության ղեկավարին հարի՞ր պահվածք է սա: Մանավանդ որ Ռուբեն Միրզախանյանը հրապարակավ հայտարարել էր արդեն, որ հրաժարվում է կուսակցությունում ունեցած բոլոր պատասխանատվություններից ու մնում է շարքային անդամ: Այսինքն սա մի գործելաոճ է, որի դեմ ՀՌԱԿ-ի ներսում պայքարելը ենթադրում է շարունակական քաշքշուկ: Մինչդեռ նոր կուսակցություն հիմնելը շատ ավելի տրամաբանական է ու նպատակահարմար, մանավանդ որ այն հիմնում են հին ռամկավարները: Բոլոր նրանք, ովքեր վերջին շրջանում եկել են անդամագրվելու Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությանը, առաջին հերթին պահանջ էին դնում, որ Հարութը որեւէ առնչություն չունենա այս նախաձեռնության հետ: Մանավանդ որ, ՀՌԱԿ՝ որպես քաղաքական ակտիվ կառույց, գոյություն չունի:

**- ՀՌԱԿ ատենապետը հակառակն է պնդում, ո՞րն է չգոյության Ձեր հիմնավորումը, այն, որ կուսակցությունը երեք ընտրությունների չի՞ մասնակցել:**

- Իսկ դա քի՞չ է: Ի դեպ, Հայաստանի օրենսդրությամբ, եթե քաղաքական կուսակցությունը երկու խորհրդարանական ընտրությունների անընդմեջ չի մասնակցում, ինքնաբերաբար լուծարվում է եւ վերածվում հասարակական կազմակերպության: Այսինքն, մեր մտավախություններից մեկն էլ այն է, որ հաջորդ ընտրություններից հետո Հարութի շնորհիվ մենք կկանգնենք նաեւ այդ փաստի առջեւ, երբ ՀՌԱԿ այլեւս գոյություն չի ունենա ու ամեն ինչ հարկադրված կլինենք սկսել զրոյից: Դե, եթե այդպես է, ավելի լավ է սկսել հիմա, քան 2012-ին: Հարութները չեն, որ պետք է որոշեն 124 տարի գոյություն ունեցող կուսակցության ճակատագիրն ու նրա զարգացման հեռանկարները: Նա փոքր մարդ է:

Զրուցեց ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ
«Իրավունք դե ֆակտո»,
10 հուլիսի 2009 թ

ARD.QXD 7/14/2009 10:36 PM Page 1



# «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ»

ARDSHININVESTBANK

**Տեղեկություններ բանկի մասին**

- «Արդյունաբերության եւ Շինարարության Ինվեստիցիոն Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը 2003թ. փետրվարին գրանցվեց ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ եւ ստացավ բանկային գործունեություն իրականացնելու թիվ 83 լիցենզիան
- 2003թ մարտ-մայիս ամիսներին ձեռք բերեց 80 տարվա պատմություն ունեցող եւ տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած հանրապետության համակարգաստեղծ բանկերից մեկի` «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների եւ պարտավորությունների զգալի մասը եւ լայն մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ)
- 2003թ նոյեմբեր ամսին ձեռք բերեց Հանրապետության հնագույն բանկի` «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի բիզնեսի հիմնական մասը իր ենթակառուցվածքներով (35 մասնաճյուղ)
- Բանկը հանդիսանում է.

*Հայաստանի բանկերի միության անդամ,*
*Հայ-վրացական գործարար համագործակցության ասոցիացիայի անդամ,*
*MasterCard/Europay համաշխարհային վճարային համակարգի փոխկապակցված անդամ,*
*SWIFT համակարգի բաժնետեր,*
*«Հայինկասացիա» ՓԲԸ բաժնետեր,*
*ՀՀ տարածքում գործող «ArCa» պրոցեսինգային ընկերության բաժնետեր եւ լիիրավ անդամ,*
*«Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության» անդամ,*
*«Հայաստանի ֆոնդային բորսա» կազմակերպության անդամ:*

Բանկը կառավարում է մասնաճյուղային լայն ցանց` 49 մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում եւ 6 մասնաճյուղ` Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ինչպես նաեւ ունի ներկայացուցչություն Փարիզում:

Բանկը գտնվում է Գրիգոր Լուսավորչի 13 հասցեով: 2009 թվականի երկրորդ եռամսյակում բանկի աշխատակիցների միջին օրական թվաքանակը կազմել է 1045 աշխատակից, որից 184-ը սպասարկող անձնակազմ:

Բանկի, նրա գործունեության, ֆինանսական ցուցանիշների, ծառայությունների մասին ավելի լայնածավալ ինֆորմացիա զետեղված է բանկի ինտերնետային կայքում - www.ashib.am: Նշված կայքում է գտնվում նաեւ բանկի ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաեւ տեղեկատվություն բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց եւ բանկի ղեկավարների վերաբերյալ:

**Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**

- Բանկի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:
- Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):
- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են բանկի գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Բանկի ակտիվները պետք է իրացվեն եւ պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:




*Հավելված 6*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ֆինանսական արդյունքների մասին (ձեւ թիվ 6)**
30 Հունիս 2009 թ
«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 3 | 3,166,928 | 6,484,225 | 3,163,613 | 5,921,735 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | 3 | (1,386,060) | (2,652,027) | (1,041,192) | (1,930,649) |
| Զուտ տոկոսային եւ նմանատիպ եկամուտ | | 1,780,868 | 3,832,198 | 2,122,421 | 3,991,086 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 523,280 | 979,564 | 721,829 | 1,331,754 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (313,610) | (315,070) | (713) | (1,377) |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ այլ վճարներ | | 209,670 | 664,494 | 721,116 | 1,330,377 |
| Եկամուտ շահաբաժիններից | | | | | |
| Զուտ եկամուտ առեւտրային գործառնություններից | 5 | 257,208 | 982,054 | 345,375 | 896,146 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 62,920 | 94,576 | 28,179 | 49,077 |
| Գործառնական եկամուտներ | | 2,310,666 | 5,573,322 | 3,217,091 | 6,266,686 |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | 7 | (228,088) | (625,810) | 122,759 | (133,629) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (942,250) | (1,831,579) | (1,644,124) | (2,440,051) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (415,635) | (807,014) | (295,302) | (548,238) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս | 10 | | | | |
| Շահույթը/ (վնասը) մինչեւ հարկումը | | 724,693 | 2,308,919 | 1,400,424 | 3,144,768 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (157,118) | (429,542) | (343,571) | (668,813) |
| Շահույթը (վնասը) հարկումից հետո | | 567,575 | 1,879,377 | 1,056,853 | 2,475,955 |
| Հայտարարված շահաբաժիններ, այդ թվում` | | | | | |
| արտոնյալ բաժնետոմսերի գծով | | | | | |
| սովորական բաժնետոմսերի գծով | | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | | | |
| Ժամանակաշրջանի զուտ շահույթ | | | | | |
| Այդ թվում` | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Փոքրամասնության բաժնեմաս | | | | | |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.




*Հավելված 7*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ձեւ թիվ 7)**
**30 Հունիս 2009 թ**
«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար ՀՀ դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ եւ մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 25,687,308 | 17,643,630 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | 3,838 | 3,838 |
| 1.3 | Պահանջներ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 14 | 12,043,417 | 7,655,294 |
| 1.4 | Առեւտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ | 15 | | |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 16 | 63,502,725 | 72,921,342 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 3,152,696 | 4,832,240 |
| 1.7 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | | |
| 1.8 | Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում | 19 | | |
| 1.9 | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 20 | 9,424,468 | 9,760,013 |
| 1.10 | Հետաձգված հարկային ակտիվներ | 11 | | |
| 1.11 | Այլ ակտիվներ | 21 | 1,229,102 | 376,719 |
| | Ընդամենը` ակտիվներ | | 115,043,554 | 113,193,076 |
| 2 | Պարտավորություններ | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22 | 16,711,385 | 14,622,265 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 23 | 69,201,714 | 70,009,175 |
| 2.3 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 24 | 802,093 | 1,511,065 |
| 2.4 | Առեւտրային նպատակներով պահվող պարտավորություն | 25 | | |
| 2.5 | Վճարվելիք գումարներ | 26 | 67,543 | 67,827 |
| 2.6 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 11 | 594,211 | 594,211 |
| 2.7 | Պահուստներ | 7 | 115,891 | 137,900 |
| 2.8 | Այլ պարտավորություններ | 27 | 567,198 | 1,058,381 |
| | Ընդամենը` պարտավորություններ | | 88,060,035 | 88,000,824 |
| 3 | Կապիտալ | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 28 | 13,802,404 | 13,802,404 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | | 1,711,179 | 1,711,179 |
| 3.3 | Պահուստներ` | | 3,498,206 | 3,298,503 |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 963,121 | 675,308 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | | 2,535,085 | 2,623,195 |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | | 7,971,730 | 6,380,166 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | 29 | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | Ընդամենը` կապիտալ | | 26,983,519 | 25,192,252 |
| | Ընդամենը` պարտավորություններ եւ կապիտալ | | 115,043,554 | 113,193,076 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.




*Հավելված 8*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձեւ թիվ 8)**
**30 Հունիս 2009 թ**
«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | | | Էմիսիոն եկամուտ /վնաս | Պահուստներ | | | Չբաշխված շահույթ/ վնաս | Միջանկյալ - շահութաբաժիններ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | | Գլխավոր պահուստ | Վերագնահատումից պահուստներ* | Վերաչափումից տարբերություններ* | | | | |
| Հոդվածներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ) | | | | | | | | | | | |
| 1. Մնացորդը նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2008 թ. 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 616,430 | 1,222,391 | - | 1,311,727 | - | - | 18,664,131 |
| 2. Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 616,430 | 1,222,391 | - | 1,311,727 | - | - | 18,664,131 |
| 3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում` | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3.1. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | | | | | | - |
| 3.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների`իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | | | | | | - |
| 3.3.Հետաձգված հարկի ազդեցություն | | | - | | | | | | | | - |
| 3.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | - | | | | | | | | - |
| 4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | - | | | | | | | | - |
| 4.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | - | | | | | | | | - |
| 5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | - | | | | | 2,475,955 | | | 2,475,955 |
| 6. Բաշխված շահութաբաժիններ | | | - | | | | | | | | - |
| 7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | | | - | | | | | | | | - |
| 7.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | - | | | | | | | | - |
| 8. Ներքին շարժեր, այդ թվում` | - | - | - | - | 58,877 | - | - | (58,877) | - | - | - |
| 8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | - | | 58,877 | | | (58,877) | | | - |
| 8.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 8.3. էմիսիոն վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 8.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | - | | | | | | | | - |
| 8.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | - | | | | | | | | - |
| 9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2008 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 1,222,391 | - | 3,728,805 | - | - | 21,140,087 |
| **Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)** | | | | | | | | | | | |
| 9.0. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 2,623,195 | - | 6,380,166 | - | - | 25,192,252 |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | |
| 10.Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | 2,623,195 | - | 6,380,166 | - | - | 25,192,252 |
| 11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում` | - | - | - | - | - | (88,110) | - | - | - | - | (88,110) |
| 11.1 Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | | | | | | - |
| 11.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների` իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | - | | | (88,110) | | | | | (88,110) |
| 11.3. Հետաձգված հարկի ազդեցություն | | | - | | | | | | | | - |
| 11.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | - | | | | | | | | - |
| 12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում | | | - | | | | | | | | - |
| 12.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | - | | | | | | | | - |
| 13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | - | | | | | 1,879,377 | | | 1,879,377 |
| 14. Բաշխված շահութաբաժիններ | | | - | | | | | | | | - |
| 15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | | | - | | | | | | | | - |
| 15.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | - | | | | | | | | - |
| 16. Ներքին շարժեր, այդ թվում` | - | - | - | - | 287,813 | - | - | (287,813) | - | - | - |
| 16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | - | | 287,813 | | | (287,813) | | | - |
| 16.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 16.3. էմիսիոն վնասի ծածկում | | | - | | | | | | | | - |
| 16.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | - | | | | | | | | - |
| 16.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | - | | | | | | | | - |
| 17. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2009 թ. | 13,802,404 | - | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | 2,535,085 | - | 7,971,730 | - | - | 26,983,519 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.



# Ծանուցում

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում 2009թ. հուլիսի 10-11-ը գումարված համահայկական համաժողովի**

## ԲԱՆԱՁԵՎԸ

Մենք՝ աշխարհի 25 երկրներից ժամանած հայության ներկայացուցիչներս, ԼՂՀ նախագահի բարձր հովանավորությամբ կազմակերպված համաժողովի ընթացքում քննարկելով այս ժամանակաշրջանի մեր ազգային-պետական կարեւորագույն՝ Արցախի եւ հայ-թուրքական հարաբերությունների հիմնահարցերը՝ հաստատում ենք.

1. Հայաստանն ու հայությունը պատասխանատու, շրջադարձային փուլում են: Մեր օրակարգի երկու հիմնահարցերի զարգացմամբ ու հանգուցալուծման բնույթով է պայմանավորված մեր ինքնության պահպանումը, հայկական երկու պետությունների եւ մեր ժողովրդի ապագան:

2. Մենք վճռական ենք՝ կարելի ու անկարելի բոլոր միջոցներով պաշտպանելու ազգային-պետական մեր շահերն ու իրավունքները եւ ապահովելու մեր ինքնուրույն ու արժանապատիվ տեղը քաղաքակիրթ ժողովուրդների ընտանիքում:

3. Մենք ինքնավստահություն, իրատեսություն եւ քաղաքական կամք ենք պահանջում ՀՀ եւ ԼՂՀ այսօրվա եւ վաղվա իշխանություններից, որպեսզի ճակատագրական այս երկու հիմնահարցերում նրանք առաջնորդվեն բացառապես հայ ժողովրդի շահերով եւ սերունդների առջեւ պատասխանատվությամբ:

4. Մենք գիտակցում ենք, որ ազգի ու պետության հիմքերին առնչվող բոլոր խնդիրները, արտաքին ու ներքին քաղաքականությունը փոխկապակցված ամբողջություն են եւ պահանջում են համակողմանի ու կշռադատված մոտեցումներ:

5. Հայաստանի Հանրապետությունը, Արցախը, Սփյուռքը միայն իբրեւ մեկ միասնական օրգանիզմ կարող են կազմակերպված ուժի վերածվել, ունենալ ընդհանրական կամքի արտահայտման ձեւաչափ, բացահայտել մեր անսահման ներքին կարողականությունը եւ մեր հարեւաններին, աշխարհի ուժային կենտրոններին ապացուցել, որ հայությունը թույլ չի տալու ոտնահարել իր արդարացի իրավունքները:

Մեկնելով այս հաստատումներից՝ հայ-թուրքական հարաբերությունների առումով համաժողովը արձանագրում է.

Իբրեւ հարեւան պետություններ՝ Հայաստանն ու Թուրքիան ի վերջո պարտավոր են բնականոն հարաբերություններ հաստատել: Առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ սկսելու եւ սահմանները բացելու Հայաստանի նախաձեռնությունը արդեն իսկ զիջում էր եւ բարի կամքի դրսեւորում Թուրքիայի հանդեպ: Բայց առայսօր, ավելի քան մեկ տարի ընդգրկող ժամանակահատվածում, Թուրքիան համարժեք չի արձագանքել Հայաստանի միակողմանի պատրաստակամությանը: Թուրքիայի ոչ մի առաջնորդ հրապարակավ չի խոսել առանց նախապայմանների հարաբերությունները կարգավորելու ցանկության մասին: Թուրքիան շարունակում է նախապայմաններ թելադրել, անընդմեջ մեծացնում է իր բացահայտ կանխակալ դերակատարությունը Արցախի հարցում եւ իրականում գնում է ոչ թե հարաբերությունների կարգավորման, այլ հաջողությամբ մոլորեցնում է միջազգային հանրությանը՝ օրակարգից դուրս մղելով Հայկական հարցը:

Այս համատեքստում միանգամայն սխալ ու անհեռատես քայլ էր 2009թ. ապրիլի 22-ի համատեղ հայտարարության ստորագրումը: Նույնքան ու ավելի վտանգավոր են ներկայիս միտումները, երբ աշխարհի ուժային կենտրոնները փորձում են արագացված ինչեւիցե լուծումներ պարտադրել Արցախյան հարցում՝ դրանով իսկ Թուրքիային ձեռնտու հուն մղելով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ընթացքը: Այլեւս ակնհայտ է, որ Հայաստանն ու հայությունը ստիպված են դիմակայել թուրք-ադրբեջանական տանդեմի միասնական քաղաքականությանը:

Այս պայմաններում մենք համոզված ենք հետեւյալ դրույթների ճշմարտացիության եւ դրանց պետականորեն հետապնդման անհրաժեշտության մեջ.

ա) Առանց նախապայմանների շրջափակման վերացումը եւ միջազգային իրավունքի ընդհանուր հիմունքներով դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պետք է դիտվի իբրեւ երկու երկրների երկխոսության բնական մեկնակետ: Իրապես բարիդրացիական հարաբերություններ կարող են լինել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմամբ եւ հայ ժողովրդի իրավունքների վերականգնմամբ:

բ) Ցեղասպանության միջազգային համընդհանուր եւ մասնավորապես Թուրքիայի կողմից ճանաչումն ու դատապարտումը հիմնարար նշանակություն ունի ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլեւ՝ տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի հաստատման եւ ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգի այս դրույթը վերջին շրջանում փաստորեն դադարել է արտաքին քաղաքական գործունեության ուղենիշ լինելուց: Սա անթույլատրելի է: Անթույլատրելի է նաեւ Ցեղասպանության փաստը պատմաբանների քննարկման նյութ դարձնելու ցանկացած փորձ:

գ) Բացարձակապես անընդունելի է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բնականոնացումը Հայաստանի ինքնիշխան եւ կենսունակ լինելիության եւ սերունդների իրավունքների հաշվին: ՀՀ իշխանությունները այլեւս չպետք է թույլ տան, որ բանակցությունների իմիտացիան Թուրքիան ծառայեցնի միջազգային ասպարեզում քաղաքական ու քարոզչական առավելություններ կուտակելուն:

դ) Հայաստանի իշխանությունը պարտավոր է վերագնահատել ու իմաստավորել մեկ տարի առաջ իր նախաձեռնած հրապարակային հարաբերությունների ընթացքը, արդեն իսկ առկա բացասական արդյունքները, միջազգային հանրության առաջ բացահայտել Թուրքիայի իրական նպատակները եւ դադարեցնել բանակցությունները:

Արցախյան հիմնահարցի ներկա հանգրվանի առնչությամբ համաժողովը արձանագրում է.

Տարածաշրջանում ստեղծված ստատուս քվոն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը բռնի ուժով ճնշելու, պատերազմ սանձազերծելու եւ այդ պատերազմում պարտվելու Ադրբեջանի քաղաքականության արդյունքն է: Արցախը ոչ միայն կարողացել է պաշտպանել ապրելու իր իրավունքը, այլեւ միջազգային բոլոր նորմերին համապատասխան ժողովրդավարական պետություն է ստեղծել, որ բնականորեն կայանում ու զարգանում է: Այսօր եւ վաղը Արցախի ինքնուրույնությունն ու անվտանգությունը ուղղակիորեն առնչվում են Հայաստանի ու համայն հայ ժողովրդի արժանապատվությանը, լինելիությանն ու հեռանկարին: Հիմնահարցը հապճեպ կարգավորելուն ուղղված որոշ միտումներ եւ հատկապես Ադրբեջանի ռազմաշունչ հայտարարությունները մեզ ստիպում են մշտապես զգոն լինել, խնդիրը պահել մեր համազգային օրակարգում եւ անհրաժեշտության դեպքում համահայկական ուժերով բացառել հիմնահարցի ոչ արդարացի լուծման հնարավորությունը:

Առ այդ՝ համաժողովը գտնում է.

ա) Արցախյան հիմնահարցի վերջնական կարգավորման ուղին խաղաղ բանակցային գործընթացն է, որտեղ սակայն պետք է փոխվի խեղված ձեւաչափը, եւ ԼՂՀ-ն հանդես գա իբրեւ լիիրավ կողմ:

բ) Բանակցային գործընթացում հիմք պետք է ընդունել Արցախի ժողովրդի արդեն իսկ կայացած ինքնորոշման փաստը եւ առաջնորդվել 1991թ. անկախության եւ 2006թ. ԼՂՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեների արդյունքներով: Բանակցությունները պետք է նպատակ ունենան առաջնահերթ լուծում տալ ԼՂՀ անկախության ճանաչման եւ նրա անվտանգության ապահովման հարցերին եւ չպետք է շրջանցեն բռնազավթված Շահումյանն ու Գետաշենը, Մարտակերտի ու Մարտունիի հատվածները եւ Ադրբեջանից տեղահանված հարյուր հազարավոր հայերի իրավունքները:

գ) Լեռնային Ղարաբաղը երբեք մաս չի կազմել անկախ Ադրբեջանին, իսկ 1991թ. հռչակել է իր անկախությունը Ադրբեջանին չպատկանող տարածքներում: Խորհրդային Միության կազմալուծմամբ ավարտվել է Խորհրդային Ադրբեջանի տիրապետությունը Արցախի վրա: Արցախյան պատերազմի նախահարձակը եւ հետեւանքների պատասխանատուն Ադրբեջանն է:

դ) Գիտակցելով, որ բանակցությունները ենթադրում են փոխզիջումներ, միաժամանակ պնդում ենք, որ փոխզիջումները, հակամարտության կարգավորման բոլոր բաղադրիչների հաշվառումով, կարող են լինել միմիայն համարժեք, հավասարաչափ, միաժամանակյա եւ տեղադրվել փաթեթային ամբողջական լուծման համակարգում: Այլապես ԼՂՀ շուրջ անվտանգության գոտու ցանկացած թուլացում, առանց ԼՂՀ տարածքային ամբողջականության վերականգնման, մեծացնելու է պատերազմի հավանականությունը եւ վտանգելու Արցախի բնակչությանը:

ե) Այս համատեքստում, այսպես կոչված, նորացված Մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության կարգավորումը արագացնելուն ուղղված համանախագահող երկրների նախագահների կոչը բացարձակապես չի բխում հիմնախնդրի բնույթից եւ հակամարտության ծավալման պատմությունից: Ավելին՝ այն շրջանցում եւ լիովին անտեսում է ԼՂՀ ժողովրդի օրինապաշտ կերպով արդեն իսկ արտահայտած կամքը: Համաժողովը դատապարտելի, անթույլատրելի եւ իրավական ուժից զուրկ է համարում միջազգային որեւէ փաստաթղթի ընդունումը՝ առանց հակամարտության հիմնական կողմի՝ ԼՂՀ իշխանության անմիջական մասնակցության: Համաժողովը հաստատում է, որ Հայաստանի Հանրապետությունը Ղարաբաղի ժողովրդի համար այս կենսական հարցի լուծման մեջ իրավասու չէ փոխարինել ԼՂՀ-ին: Համաժողովը ՀՀ իշխանություններից պահանջում է չստորագրել առաջարկվող փաստաթուղթը եւ հաստատ միջոցներ ձեռնարկել ԼՂՀ-ն բանակցություններում որպես լիիրավ կողմ վերադարձնելու համար:

զ) Հայաստանն բոլոր միջոցներով պետք է երաշխավորի ԼՂՀ անվտանգությունն ու անկախությունը եւ հասնի այդ կարգավիճակի միջազգային ամրագրմանը: Առ այդ՝ միջազգային հանրության հովանու ներքո ՀՀ, ԼՂՀ եւ Ադրբեջանի միջեւ ստորագրված ուժի կիրառումը բացառող փաստաթուղթը միայն կարող է ապահովել խաղաղ բանակցային գործընթացի անշրջելիությունը:

է) Մեզ համար Արցախը Հայաստան է եւ մնալու է այդպիսին: Համայն հայության զորաշարժով մենք մեկ անգամ արդեն հաղթել ենք Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում, եւ թող ոչ ոք չկասկածի, որ նույնն է լինելու, եթե դարձյալ ազատ ժողովրդի հետ փորձեն խոսել զենքով:

Արցախի հիմնախնդրին, հայ-թուրքական հարաբերություններին նվիրված երկօրյա համաժողովի մասնակիցներս վերահաստատում ենք ազգային-պետական հարցերում մեր միասնականությունն ու վճռականությունը: Մեզ համար գերագույն արժեքներ են Հայաստանի անկախ Հանրապետությունը, ազատ Արցախը, կազմակերպված Սփյուռքը եւ մեր ժողովրդի անժամանցելի իրավունքները:

*Ստեփանակերտ*

→

*Հավելված 9*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձեւ թիվ 9)**
30 Հունիս 2009 թ
«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք.Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | x | x |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 3,801,108 | 2,703,056 |
| Ստացված տոկոսներ | 5,636,746 | 6,138,143 |
| Վճարված տոկոսներ | -1,636,375 | (2,708,627) |
| Ստացված կոմիսիոն գումարներ | 1,331,754 | 979,564 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | -1,377 | (315,070) |
| Առեւտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) | 69,235 | (38,360) |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս) | 784,315 | 696,407 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | 207,239 | 52,892 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | -1,628,273 | (1,232,726) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ եւ վճարված այլ ծախսեր | -962,156 | (869,167) |
| Դրամական հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | -2,572,184 | 3,807,142 |
| Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում) | -11,635,712 | 14,904,938 |
| այդ թվում՝ վարկերի եւ փոխատվությունների նվազում/ (ավելացում) | -14,154,531 | 14,238,762 |
| առեւտրային նպատակով պահվող եւ վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | 1,727,781 | 1,639,342 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում) | | |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում) | 288,259 | (973,166) |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | 9,063,528 | (11,097,796) |
| այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում) | 9,986,833 | (7,161,549) |
| այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում) | -422,370 | (3,936,247) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչեւ շահութահարկի վճարումը | 1,228,924 | 6,510,198 |
| Վճարված շահութահարկ | -993,231 | (1,209,964) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | 235,693 | 5,300,234 |
| 2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | x | x |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Հիմնական միջոցներում եւ ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | -988,499 | (62,079) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | -573,684 | (90,851) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | 596 | 96 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | -1,561,587 | (152,834) |
| 3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | x | x |
| Վճարված շահաբաժիններ | | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | 1,662,297 | 440,688 |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | 474,062 | 2,548,615 |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | | (703,580) |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | 2,136,359 | 2,285,723 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 20,142 | 4,260,595 |
| Դրամական միջոցների եւ դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | 830,607 | 11,693,718 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 18,655,293 | 25,209,428 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 19,485,900 | 36,903,146 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.




*Հավելված 1*
*«Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգի»*

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ**

(եռամսյակային)

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ
4/1/2009 թ-ից ---30/06/2009--- թ.

*(հազ. դրամ)*

| Նորմատիվներ | Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը | 15,513,583 | 50,000 | Խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 23,271,173 | 5,000,000 | Խախտում առկա չէ |
| Ն1 Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 24.53% | 12.0% | Խախտում առկա չէ |
| Ն21 Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 33.69% | 15.0% | Խախտում առկա չէ |
| Ն22 Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 144.14% | 60.0% | Խախտում առկա չէ |
| Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը | 18.40% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը | 93.76% | 500.0% | Խախտում առկա չէ |
| Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը | 2.00% | 5.0% | Խախտում առկա չէ |
| Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը | 3.59% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը | X | Դրամով - 8% Արտարժույթով - 12 % | Խախտում առկա չէ |



